# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ԵՎ ԱՀ /ԼՂ/ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

HELSINKI CITIZENS ASSEMBLY

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

OPEN SOCIETY

FOUNDATIONS

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2022 ԹՎԱԿԱՆԻՆ

## ՀՀ ԵՎ ԱՀ /ԼՂ/ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

## ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2023

# Ամփոփ նկարագիր

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) սույն տեղեկանքով ներկայացնում է 2022 թվականին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Արցախի Հանրապետության/Լեռնային Ղարաբաղի (ԱՀ/ԼՂ) զինված ուժերում զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունները, որոնք հավաքագրվել են զանգվածային լրատվամիջոցներով և պաշտոնական աղբյուրներով տարածված տեղեկությունների, ինչպես նաև Կազմակերպության կողմից պաշտոնական կառույցներին (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե) ուղղված տեղեկատվության հարցումների պատասխանների, ինչպես նաև զինծառայողների ծնողների կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա: Տեղեկանքում ներկայացված են ինչպես զինվորական ծառայության հետ կապված, այնպես էլ ծառայողական պարտականությունները չկատարելու հանգամանքներում զիծառայողների մահվան դեպքերը:

Կազմակերպության կողմից հավաքագրված տեղեկությունների համաձայն **2022 թ. ընթացքում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում գրանցվել է 64 զինծառայողի մահվան դեպք:**

Այն չի ներառում 2022 թ. սեպտեմբերի 13-ից 15-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության նկատմամբ Ադրբեջանի լայնածավալ հարձակման հետևանքով զոհված զինծառայողների թիվը:

2023 թ. հունվարի 11-ին ՀՀ պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը լրագրողների հետ զրույցում հայտնեց[1], որ ***2022 թ. սեպտեմբերյան երկօրյա մարտերի ընթացքում հայկական կողմն ունի 224 զոհ, ում մարմինները նույնականացվել են: ՀՀ պաշտպանության փոխնախարարը նաև հայտնեց, որ այժմ ևս 3 զինծառայողի գտնվելու վայրն անհայտ է՝ հավելելով, որ նրանց գտնվելու հստակ վայրը պարզելու և նրանց մարմինները հնարավորության դեպքում դուրս բերելու ուղղությամբ իրականացվում են աշխատանքներ[2]:***

Մահվան **64 դեպքերի պատճառներն են՝**

- **առողջական խնդիրներ՝** 17 դեպք,
- **ավտովթար՝** 17 դեպք,

[1] https://news.am/arm/news/738984.html
[2] Պաշտոնատար անձի կողմից նման ձևակերպումն առնվազն անընդունելի է, քանի որ եթե անձինք համարվում են անհայտ կորած («գտնվելու վայրն անհայտ»), ապա ինչպես կարող է խոսք գնալ նրանց «մարմինների տեղորոշման և դուրսբերման մասին», և հակառակը,եթե հայտնի է, որ անձինք մահացել են, ապա նրանք չեն կարող համարվել «գտնվելու վայրն անհայտ» զինծառայողներ:

- **հրաղաղարի ռեժիմի խախտում՝ 14** դեպք,
- **ինքնասպանություն՝ 6** դեպք,
- **սպանություն 6** դեպք, որից՝ դիտավորյալ՝ 2 դեպք, ԶՕԿ՝ 1 դեպք, անհայտ պայմաններում՝ 1 դեպք, մարտական ծառայության կանոնների խախտում՝ 2 դեպք,
- **դժբախտ պատահար՝ 2** դեպք՝ (այրվածք հրդեհի հետևանքով, հոսանքահարում, ջրահեղձ),
- **զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում՝ 1** դեպք,
- **ականի պայթյուն՝ 1** դեպք:

2021 թվականին զինծառայողների մահացության դեպքերը 76-ն են եղել, որոնց պատճառներն են՝

- 19-ը՝ հրաղաղարի ռեժիմի խախտում,
- 17-ը՝ առողջական խնդիրներ,
- 15-ը՝ ավտովթար (որից 2-ը՝ վրաերթի հետևանքով մահվան դեպք է, որը դատախազության կողմից ներառվել է ավտովթարի հետևանքով մահվան դեպքերի թվի մեջ),
- 11-ը՝ սպանություն (3-ը որակվել է որպես՝ երկու կամ ավելի անձանց սպանություն, 4-ը՝ մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում, 2-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտում (ԶՕԿ), 1-ը՝ սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, 1-ը՝ դիտավորյալ սպանություն),
- 9-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնել,
- 5-ը՝ դժբախտ պատահար (1-ը՝ ձնահյուս, 1-ը՝ կայծակնահարում, 1-ը՝ ավտոմեքենայի դետալի հարված, 1-ը՝ ծառի տապալում, 1-ը՝ հանկարծամահ, որը դատախազության կողմից ներառվել է դժբախտ պատահարի հետևանքով մահվան դեպքերի թվի մեջ):

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2021 և 2022 թթ. մահացած զինծառայողների թիվն ըստ պատճառների և ամիսների:

*Գծապատկեր 1. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2021 և 2022 թթ. զինծառայողների մահվան դեպքերի թիվն ըստ պատճառների և ամիսների*


2021, 2022 թթ. զինծառայողների մահվան պատճառներն ըստ ամիսների
12
10
8
6
4
2
0
2021 հունվար
2022 հունվար
2021 փետրվար
2022 փետրվար
2021 մարտ
2022 մարտ
2021 ապրիլ
2022 ապրիլ
2021 մայիս
2022 մայիս
2021 հունիս
2022 հունիս
2021 հուլիս
2022 հուլիս
2021 օգոստոս
2022 օգոստոս
2021 սեպտեմբեր
2022 սեպտեմբեր
2021 հոկտեմբեր
2022 հոկտեմբեր
2021 նոյեմբեր
2022 նոյեմբեր
2021 դեկտեմբեր
Ականի պայթյուն ՝ 2021 - 0, 2022 - 1
Դժբախտ պատահար՝ 2021 - 5, 2022 - 2
Վտանգ նյութ. հետ վարվ. կան. խախտ. 2021 - 0, 2022 - 1
Հրաձգարի ռեժիմի խախտում՝ 2021 - 19, 2022 - 14
Ավտովթար՝ 2021 - 15, 2022 - 17
Առողջական խնդ.՝ 2021 -17, 2022 - 17
Սպանություն՝ 2021-11, 2022 - 6
Ինքնասպանություն՝ 2021 -9, 2022 - 6

2021 թվականի համեմատ 2022 թ. մահվան դեպքերի ընդհանուր թիվը նվազել է 16 %-ով (12-ով):

***Հրաղաղարի ռեժիմի խախտման*** հետևանքով մահվան դեպքերը նվազել են 26 %-ով (5-ով):

**Հրաղաղարի ռեժիմի խախտման, սահմանային իրավիճակի հետևանքով տեղեկությունններն առավել մանրամասն ներկայացված են *Հավելված 1-ում:***

***Դժբախտ պատահարների, ինքնասպանության և սպանության*** հետևանքով մահվան դեպքերը ևս 2021թ համեմատ նվազել են 2022 թվականին՝ համապատասխանաբար 60 %-ով (3-ով), 33 %-ով (3-ով) և 45 %-ով (5-ով) *(տե՛ս գծապատկեր 2):*

***Գծապատկեր 2. 2021 և 2022 թթ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացության դեպքերի ամփոփ թվերը ըստ պատճառների***




Հատկանշական է, որ 2022 թ. ինքնասպանության հետևանքով դեպքերից երկուսը տեղի են երկու իրար հաջորդող օրերին՝ մարտի 16-ին և 17-ին:

Ինքնասպանություն որակված դեպքերից մեկին անդրադառնանք մանրամասն: Այսպես, 2022 թ. ինքնասպանություն գործած զինծառայողներից մեկը, ըստ ՀՀ ՊՆ և ՀՀ դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրված տեղեկությունների՝ պահեստազորային զինծառայող է, ով 2022 թ. մայիսի 20-ին «փսիխոտիկ խանգարում?» ախտորոշմամբ ընդունվել է հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք, ապա մոտ երկու շաբաթ անց՝ հունիսի 1-ին «Ալկոհոլային էնցեֆալոպաթիա» ախտորոշմամբ տեղափոխվել ՀՀ ԱՆ Կախվածությունների բուժման ազգային կենտրոն և ութ օր անց՝ հունիսի 9-ին ինքնասպանություն է գործել՝ ցած նետվելով նույն կլինիկայի 3-րդ հարկից: Այնուամենայնիվ, չկան մանրամասներ, թե երբ է պահեստազորում հաշվառված անձը կանչվել վարժական հավաքի:

**Այս և նմանատիպ դեպքերը փաստում են, որ մինչ վարժական հավաքներին անձանց ներգրավելը, ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները չեն իրականացնում պահեստազորայինների առողջական վիճակի պատշաճ և համալիր բուժզննությունը, որի մասին Կազմակերպությունը բարձրաձայնել է նախկին և ընթացիկ վարժական հավաքների վերաբերյալ:**

**ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ վարժական հավաքների կանչված քաղաքացու առողջության պահպանման իրավունքը:**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է. «1. Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և **վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն:** Սույն մասում նշված դեպքերում քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում է **առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում**»:

Բացի այդ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով ՀՀ Կառավարությունը 18.10.2018 թ-ին կայացված «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կարգը

սահմանելու մասին» թիվ 1174-Ն որոշմամբ սահմանում է, որ «Այն պահեստազորայինները, որոնք ընտրվել են որպես վարժական հավաքներում պատրաստվելու թեկնածուներ, ծանուցվում են վարժական հավաքի անցկացման օրվանից առնվազն 20 օրացուցային օր առաջ՝ **զինվորական հաշվառման տվյալներն ստուգելու և բուժհետազոտում անցկացնելու նպատակով**: Ծանուցման հիման վրա **զինվորական կոմիսարիատ ներկայացած պահեստազորայինն անցնում է բուժհետազոտում**, որի արդյունքներով վարժական հավաքի կանչվելու ենթակա ճանաչվելու դեպքում ուղարկվում է վարժական հավաքի անցկացման զորամաս՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ուժերով և միջոցներով»:

ՀՀ կառավարության թիվ 405 որոշման 15-րդ և 18-րդ կետերի համաձայն՝ զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի և ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողովի գործառույթներից է.

1) զինապարտներին զինվորական հաշվառման, զորակոչի, **վարժական հավաքների**, ինչպես նաև զինված ուժերի համար մասնագետների պատրաստության և ՌՈՒՀ-երի թեկնածուների ընտրության ժամանակ փորձաքննության ենթարկելը: Նույն որոշման 49-րդ կետը սահմանում է. «49. Պահեստազորում հաշվառված զինապարտների բժշկական փորձաքննությունը տարածքային զինվորական կոմիսարի կարգադրությամբ իրականացնում են զինկոմիսարիատների կամ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողովները՝

1) հաշվառման նպատակներով.

2) պարտադիր զինվորական ծառայության զորակոչելիս.

**3) վարժական հավաքների կանչելիս.**

4) պահեստազորում հաշվառված զինապարտի՝ իր առողջական վիճակի փոփոխության վերաբերյալ տվյալներ ներկայացնելու դեպքերում:

**Վերը շարադրված իրավական կարգավորումները ամրագրում են պետության պարտավորությունը մինչ վարժական հավաքներին անձանց ներգրավումը նրանց առողջության պահպանման իրավունքը և քաղաքացու առողջական վիճակի անհրաժեշտ և ամբողջական հետազոտության իրականացումը:**

Բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինների՝ իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարելու հետևանքով խախտվում են վարժական հավաքների ներգրավվող անձանց առողջական վիճակի պահպանման իրավունքը։

2022 թ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից հայտարարվել են վեց վարժական հավաքներ[3]: Նշենք, որ ՀՀ-ում վարժական հավաքներ սկսեցին պարբերաբար անցկացվել 2021 թ-ի սկզբից։ Միաժամանակ 2021 թ. ապրիլի 19-ին փոփոխություն կատարվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի[4] 57-րդ հոդվածում[5] և բարձրացվեց պահեստազորում գտնվելու տարիքային շեմը։

2021 թ-ին վարժական հավաքների կազմակերպման և իրականացման ընթացում բացահայտվեցին մի շարք համակարգային խնդիրներ ոչ միայն հավաքների կազմակերպման գործընթացի, այլև պահեստազորայինների զինվորական ծառայության կազմակերպման և կարգապահության ապահովման հետ կապված։ Օրինակ՝ 2021 թ-ին պահեստազորայինի մահվան մեկ դեպք որակվեց որպես «մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում, որը առաջացրել է ծանր հետևանքներ»։ Զինծառայողը մահացել էր ծառայակցի կողմից անզգուշությամբ արձակված գնդակից, իսկ մյուս ծառայակիցը ստացել էր մարմնական վնասվածք։ Ըստ ոչ պաշտոնական տեղեկությունների՝ վարժական հավաքի մասնակիցներից մեկը՝ կրակողը, քնից արթնացել ու դուրս է եկել վրանից և կարծելով, թե ծառայակիցը ադրբեջանցի դիվերսանտ է՝ կրակել է նրա ուղղությամբ։

Նմանատիպ ևս մեկ դեպք արձանագրվեց 2022 թ. հոկտեմբերի 29-ին, երբ ըստ ՀՀ քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության՝ մարտական դիրքում պահեստազորայինները վիճաբանել են, ինչի արդյունքում նրանցից մեկը կրակել է մյուսին՝ մահացու վնասվածք հասցնելով գլխի հատվածում, ապա՝ կատարել է ինքնավնասում՝ կրակելով ինքն իր ոտքին։

2022 թ. օգոստոսին արձանագրվեց վարժական հավանքներին ներգրավված երկու զինծառայողի մահվան դեպք։ Մեկ զինծառայող հանկարծամահ եղավ քնած ժամանակ, մյուսը ջրահեղձ եղավ Սևանա լճում։

---

[3]https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159525 , https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160890, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160867, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164587, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167833, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=168906 ,

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164987

[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152084

Երկու դեպքերի փաստով, ըստ ՀՀ դատախազության, հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում:

***Այսպիսով, վարժական հավաքների իրականացման ընթացքում արձանագրվել են մահվան դեպքեր ոչ միայն ոչ պատշաճ բուժզննության հետևանքով, այլ նաև վարժական հավաքներին ներգրավված անձանց զինվորական ծառայության ոչ պատշաճ կազմակերպման և պատշաճ կարգապահություն չապահովելու հետևանքով:***

## Ըստ ամիսների, պատճառների, զինծառայության տեսակի կամ զինծառայողի կարգավիճակի մահվան դեպքերի մանրամասն նկարագրությունը և դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տարածման վիճակագրությունը

2022 թ. մահվան դեպքերի վիճակագրությունն ըստ մահվան դեպքերի թվի նվազման ունի հետևյալ պատկերը. ամենաշատ թվով մահվան դեպքեր տեղի են ունեցել **օգոստոս** ամսին՝ **10** դեպք, որից 4-ը առողջական խնդիրների պատճառով է, 2-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման, 2-ը՝ ավտովթարի, 1-ը՝ դժբախտ պատահարի, 1-ը՝ ինքնասպանության:

Այնուհետև՝

- **մարտին** արձանագրվել է **7** դեպք, որից 4-ը հրադադարի ռեժիմի խախտման պատճառով է, 2-ը՝ ինքնասպանության, 1-ը՝ առողջական խնդիրների պատճառով,
- **նոյեմբերին** արձանագրվել է **7** դեպք, որից 4-ը ավտովթարի հետևանքով է, 1-ը սպանության, 2-ը՝ առողջական խնդրի,
- **հունվարին** արձանագրվել է **6** մահվան դեպք, որից 3-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով են, 2-ը՝ առողջական խնդիրների, 1-ը՝ ավտովթարի,
- **մայիսին** արձանագրվել է **6** մահվան դեպք, որից 2-ը առողջական խնդիրների հետևանքով է, 2-ը՝ ավտովթարի, 1-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման, 1-ը՝ ինքնասպանության,
- **հունիսին** արձանագրվել է **6** մահվան դեպք, որից 2-ը սպանության հետևանքով է, 2-ը՝ ավտովթարի, 1-ը՝ ինքնասպանության, 1-ը՝ առողջական խնդիրների,

- **սեպտեմբերին** արձանագրվել է **6** դեպք, որից 4-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով է, 1-ը՝ սպանության (ծառայակցի կողմից մարտական ծառայության կանոնների խախտման), 1-ը՝ ավտովթարի,
- **հոկտեմբերին** արձանագրվել է **5** դեպք, որից 2-ի պատճառը առողջական է, 1-ը՝ սպանություն, 1-ը՝ ավտովթար, 1-ը՝ականի պայթյուն
- **հուլիսին** արձանագրվել է **5** մահվան դեպք, որից 2-ը՝ ավտովթարի հետևանքով է, 1-ը՝ ինքնասպանության 1-ը՝ առողջական խնդիրների, 1-ը՝ զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտման /այրվածք հրդեհի հետրանքով/,
- **ապրիլին** արձանագրվել է **3** մահվան դեպք, որից 1-ը սպանության հետևանքով է (ծառայակցի կողմից զենքի օգտագործման կանոնների խախտման), 1-ը՝ ավտովթարի, 1-ը՝ առողջական խնդիրների,
- **փետրվարին** արձանագրվել է **2** մահվան դեպք, որից 1-ը դժբախտ պատահարի հետևանքով է, 1-ը՝ ավտովթարի,
- **դեկտեմբերին** արձանագրվել է առողջական խնդիրների հետևանքով մահվան **1** դեպք:

Ի դեպ, 2021 թ. ամենամեծ թվով մահվան դեպքերը տեղի են ունեցել **նոյեմբերին՝ 12 դեպք,** որից 7-ը հրադադարի ռեժիմի խախտման, 2-ը՝ սպանության, 1-ը՝ ավտովթարի, 1-ը՝ առողջական խնդիրների, 1-ը՝ ինքնասպանության հետևանքով: 2021 թ. **մայիսին** տեղի է ունեցել **11 դեպք,** որից 3-ը՝ ինքնասպանության, 3-ը՝ ավտովթարի, 2-ը առողջական խնդիրների 1-ը՝ սպանության, 1-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման, 1-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով:

2022 թ. 64 զինծառայողների մահվան դեպքերից միայն **30**-ի (47 %-ի) մասին է տարածվել **պաշտոնական հաղորդագրություն, 4** (6 %-ի) դեպքի մասին տեղեկություն է տարածվել միայն **զանգվածային լրատվամիջոցներով**, **3** (5 %-ի) դեպքի մասին ԶԼՄ տարածած տեղեկությունը **հաստատվել** է ՊՆ և գլխավոր դատախազության կողմից, սակայն պաշտոնական հաղորդագրություն այդ դեպքի մասին այդպես էլ չի տարածվել: Մյուս **27** (42 %) դեպքի մասին տեղեկություն ընդհանրապես **չի տարածվել**:

Համեմատության համար նշենք, որ 2021 թ-ին մահացած **76** զինծայողներից միայն **39**-ի (51 %-ի) մահվան մասին է տարածվել **պաշտոնական հաղորդագրություն**:

Նկատենք, որ նույնիսկ այն դեպքերում, երբ զինծառայողի մահը դատախազության կողմից համարվել է զինվորական ծառայության հետ կապված, միևնույն է այդ մասին պաշտոնական տեղեկություն չի տարածվել, օրինակ 2022 թ. տեղի ունեցած առողջական խնդիրների հետևանքով մեկ մահվան դեպքի մասին։

***Որպես կանոն, առողջական խնդիրների (ըստ պաշտոնական դասակարգման՝ «հիվանդության») և ավտովթարի հետևանքով զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվում։***

Ըստ կարգավիճակի զինծառայողների մահվան դեպքերին անդրադառնալով, նկատում ենք, որ 2022 թ-ին մահացած 64 զինծառայողներից **22-ը՝ պայմանագրային** զինծառայողներ են, **16-ը՝ պարտադիր ժամկետային, 16-ը՝ սպա**[6]**, 5-ը՝ ենթասպա, 5-ը՝ պահեստազորային։**

Համեմատության համար նշենք, որ 2021 թ-ի մահացած **76 զինծառայողներից 34-ը՝ պայմանագրային զինծառայողներ են, 23-ը պարտադիր ժամկետային, 11-ը՝ սպա, 4-ը՝ պահեստազորային, 4-ը՝ ենթասպա։**

Ինչպես տեսնում ենք, 2021 և 2022 թթ մահացած զինծառայողների շրջանում առավել հաճախակի են պայմանագրային զինծառայողների մահվան դեպքերը, ինչը, Կազմակերպության դիտարկմամբ, կարող է պայմանավորված լինել ինչպես պայմանագրային զինծառայության անցնողների թվի աճով, այնպես էլ պայմանագրային զինվորական ծառայության կազմակերպման չվերացող թերություններով։

Դիտարկելով զինված ուժերում մահվան դեպքերն ըստ պատճառների և մահացած զինծառայողների ծառայության տեսակի՝ արձանագրում ենք, որ.

**պայմանագրային** զինծառայողների մահացության պատճառներն են

- **ավտովթար** (10 դեպք),
- **առողջական խնդիրներ** (7 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտում** (4 դեպք),
- **սպանություն** (1 դեպք),

[6] Հաշվի առնլով այն փաստը, որ ռազմական ուսումնական հաստատություններ ընդունված անձանց թիվը նվազել է, հարկ է արձանագրել, որ սպաների մահվան թիվը գրեթե ուղիղ համեմատական է տարվա կտրվածքով ռասմաուսումնական հաստատույուններ ընդունվածների թվին, ինչըն առավել մտահոգիչ է ներկայիս պայմաններում։

**ժամկետային զինծառայողների շրջանում** մահացության պատճառներն են

- **հրաձգարի ռեժիմի խախտում** (6 դեպք),
- **ինքնասպանություն** (5 դեպք),
- **սպանություն** (4 դեպք),
- **վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում** (1 դեպք),

**սպաների մահվան պատճառներն են**

- **առողջական խնդիրներ** (7 դեպք),
- **ավտովթար** (4 դեպք),
- **հրաձգարի ռեժիմի խախտում** (3 դեպք),
- **դժբախտ պատահար** (1 դեպք),
- **ականի պայթյուն** (1 դեպք),

**ենթասպայի** մահվան պատճառն է

- **ավտովթարը** (2 դեպք)
- **առողջական խնդիրներ** (2 դեպք),
- **հրաձգարի ռեժիմի խախտումը** (1 դեպք)

**պահեստազորային զինծառայողի** մահվան պատճառն է

- **ինքնասպանությունը**(1 դեպք),
- **առողջական խնդիրներ** (1 դեպք),
- **դժբախտ պատահար** (1 դեպք),
- **սպանություն** (1 դեպք),
- **ավտովթար** (1 դեպք)։

Այսպիսով, 2022 թ-ին **հրաձգարի** ռեժիմի խախտման հետևանքով մահացության դեպքեր արձանագրվել են **թե ժամկետային (6 դեպք), թե պայմանագրային զինծառայողների (4 դեպք), թե սպաների (3 դեպք) և թե ենթասպաների (1 դեպք)** շրջանում։

**Առողջական խնդիրների** հետևանքով մահացության դեպքեր արձանագրվել են **պայմանագրային զինծառայողների (7 դեպք), սպաների (7 դեպք), ենթասպաների (1 դեպք) և պահեստազորայինների (1 դեպք)** շրջանում։

Կազմակերպությունը բազմիցս բարձրաձայնել է առողջական խնդիրների հետևանքով ժամկետային զինծառայողների մահվան համակարգային խնդրի մասին։ Ճիշտ է, 2022 թ. առողջական խնդրի հետևանքով ժամկետային զինծառայողի մահվան դեպք չի արձանագրվել, սակայն պայմանագրային զինծառայողների և սպաների մահվան դեպքերի թիվը ինչպես 2021 այնպես էլ 2022 թվականներին 14 է։

**2022 թ. առողջական խնդիրների հետևանքով** մահվան դեպքերը, որոնք գրանցվել են բոլոր տեսակի ծառայություն անցնող զինծառայողների շրջանում, բացի պարտադիր ժամկետային զինծառայողներից, փաստում են զինծառայության բոլոր փուլերում բուժզննության իրականացման և բուժօգնության տրամադրման խնդիրների մասին ։

*«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը*[7] *սահմանում է զինծառայողների սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները, բուժկանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես՝ օրենքի հոդված 344-ը սահմանում է, որ զինծառայողների առողջական վիճակի բժշկական հսկողությունն իրականացվում է հետևյալ ուղիներով՝*

- *անձնակազմի ամենօրյա հսկողություն մարտական նախապատրաստության ընթացքում և կենցաղում,*
- *զինծառայողների բուժզննում,*
- *զինծառայողների խորացված և հսկիչ-բժշկական քննություն, պլանային բուժզննումներ։*

***Ակնհայտ է, որ զինծառայության ընթացքում կամ չեն իրականացվում պլանային բժշկական զննություններ կամ դրանք իրականացվում ոչ արդյունավետ՝ առողջական խնդիրները (այդ թվում նաև՝ քրոնիկ հիվանդությունները) վաղ փուլում հայտնաբերելու և դրանց զարգացումը կանխելու տեսանկյունից։ Այդ մասին են վկայում քաղցկեղի հետևանքով երեք մահվան դեպքերը, ստամոքսային տրակտի արյունահոսության, ուղեղի արյան շրջանառության խանգարման հետևանքով մեկական մահվան դեպքերը։ Քիչ չեն նաև սրտի կաթվածի հետևանքով զինծառայողների մահվան դեպքերը՝ 3 դեպք։***

[7] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121817

*Նկատենք, որ Կազմակերպությանը հայտնի նախկինում «հանկարծամահություն» որակված մահվան դեպքերով քրեական գործ էր հարուցվում ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ: Մինչդեռ 2021 թ. նոր քրեական օրենսգրքի ընդունումից հետո նման դեպքերում քրեական վարույթ է նախաձեռնվում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածով՝ «սպանություն»: Նման մոտեցումը, ըստ Կազմակերպությանը պաշտոնական աղբյուրի բանավոր պարզաբանման, բացատրվում է այն հանգամանքով, որ հայտնի չեն դեպքի հանգամանքները, և նման բոլոր դեպքերում քրեական վարույթ է նախաձեռնվում սպանության հոդվածով, իսկ հետագայում քննությամբ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա փոփոխվում է հոդվածը կամ գործի վարույթը կարճվում կամ կասեցվում է:*

*Միաժամանակ, անհասկանալի է, թե ինչու նույն մոտեցումը չի կիրառվում մահվան դեպքերը «ինքնասպանություն» որակելիս, երբ դեպքի հանգամանքները կրկին հայտնի չեն լինում: Փոխարենը՝ նման դեպքերը շարունակաբար «ինքնասպանություն» են որակվում գործի քննության հենց սկզբից:*

**Ավտովթարի** հետևանքով մահացության դեպքեր արձանագրվել են **պայմանագրային զինծառայողների(10 դեպք), սպաների (4 դեպք), ենթասպաների (2 դեպք), և պահեստազորայինների (1 դեպք)** շրջանում:

**Ավտովթարի** հետևանքով պաշտոնապես զինծառայության հետ կապված որակված միակ դեպքն արձանագրվել է ժամկետային զինծառայողի կողմից «մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնների խախտման» հետևանքով, երբ վերջինս իրեն ամրակցված ավտոմեքենայով զորամասի տարածքում պատահաբար վրաերթի է ենթարկել նույն զորամասի պայմանագրային զինծառայողի:

*Տարիներ շարունակ ՀՀ զինված ուժերում արձանագրվել են դեպքեր, ժամկետային զինծառայողները վթարի են ենթարկվում իրենց վարած բեռնատար ավտոմեքենաներով, ինչը հանգեցնում է զինծառայողների մահվան: Ակնհայտ է, որ տրանսպորտային միջոցներ վարելու մեծ փորձառություն չունեցող զինծառայողներին նման մեքենաներ ամրակցելուց առաջ*

*անհրաժեշտ է վերջիններիս վերապատրաստել նաև ծառայության ընթացքում անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ:*

**Ինքնասպանության և սպանության** հետևանքով մահվան դեպքեր արձանագրվել են **ժամկետային (9 դեպք), պահեստազորային (2 դեպք) և պայմանագրային (1 դեպք) զինծառայողների** շրջանում:

**Այն հանգամանքը, որ 2022 թ. ինքնասպանության և սպանության դեպքերի հիմնական մասը՝ 12 դեպքից 10-ը, պարտադիր ժամկետային զինծառայողների շրջանում է, վկայում է զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայության և անձնակազմի հետ տարվող աշխատանքների ու զորամասերում հոգեբանական աշխատանքի ոչ բավարար մակարդակի մասին:**

Զգալի են նաև **մարտական դիրքերի ոչ պատշաճ կահավորման հետևանքով զինծառայողների մահվան սպանության դեպքերը**: Մասնավորապես՝մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով դեպքը, երբ զինծառայողը ծառայակցին շփոթելով ադրբեջանական զինված ուժերի զինծառայողի հետ, կրակել է վերջինիս ուղղությամբ, արձանագրվել է դիրքերի սխալ կահավորման հետևանքով. դիրքը կահավորված չի եղել համապատասխան լուսավորությամբ, զինծառայողները չեն ունեցել համապատասխան լապտերներ՝ տեսանելիություն ապահովելու համար:

**Այսպիսով, շարունակում է խիստ մտահոգիչ մնալ ոչ մարտական պայմաններում ինքնասպանության և սպանության դեպքերի զգալի թիվը զինված ուժերում:**

**Զինծառայողների ինքնասպանության և սպանության դեպքերը կազմում են 2022 թ. ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի 24 %-ը, իսկ 2021 թ. ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի 35 %-ը:**

**Դժբախտ պատահարների**՝ այդ թվում նաև **վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտման** հետևանքով մահվան դեպքեր արձանագրվել են **պահեստազորայինների (1 դեպք), սպաների (1 դեպք)և ժամկետային զինծառայողների (1 դեպք)** շրջանում:

Մարտական դիրքերի թերի կահավորման հետևանքով մեկ այլ զինծառայողի մահվան հանգամանքներն ուսումնասիրելիս՝ պարզ է դառնում, որ առավել բարձրադիր գոտիներում

մարտական հերթապահություն իրականացնող զինծառայողներն ապահովված չեն ջեռուցման համապատասխան միջոցներով: Նրանք ստիպված են քնել քնապարկերում և տաքանալ վառարաններով: Իսկ վառարաններն օգտագործելու համար որոշակի եղանակային պայմաններում ստիպված են փայտի փոխարեն օգտագործել ածուխ, որի պատճառով վառարանում առաջացած պայթյունից սինթետիկ քնապարկը հեշտությամբ այրվել է: Արդյունքում զինծառայողները չունենալով համապատասխան միջոցներ կրակը մարելու համար՝ ստացած այրվածքներից մահանում են[8]:

*Մարտական դիրքերի կահավորման խնդիրն առավել արդիական դարձավ 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո, երբ Հայաստանի Հանրապետության մի շարք բնակավայրեր դարձան սահմանամերձ՝ չունենալով համապատասխան կահավորում: Չնայած պետական մարմինների կողմից պարբերաբար հայտարարվում է, որ կահավորման աշխատանքներ են իրականացվում, սակայն նմանատիպ դեպքերը փաստում են հակառակի մասին:*

*Միևնույն ժամանակ նշենք, որ զինված ուժերում սպայական կազմի կրթության որակի վերաբերյալ տարիներ շարունակ առկա են մտահոգություններ, որոնք հատկապես բացահայտվում են զինծառայողների մահվան փաստերով իրականացված քննության նյութերով. իրապես, ռազմական կրթության որակի բարձրացումը որոշիչ և էական նշանակություն ունի զինված ուժերում բարեվարքության, զինծառայողների իրավունքների պաշտպանության, զինվորական կարգապահության ապահովման համար:*

*ՀՀ կառավարության 2021 - 2026 թթ. հնգամյա ծրագրի զինված ուժերի բարեփոխումների բաղադրիչին անդրադարձել ենք 2021[9] և 2022 թթ[10] հրապարակված տեղեկանքներում: Զինված ուժերի բարեփոխումների ծրագրի առաջնահերթություններից մեկը վերաբերում է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը, զինված ուժերի կարգապահության խթանմանը, զինված ուժերում մարդու*

---

[8] Սույն տեղեկանքը պատրաստելու ընթացքում 2023 թ. հունվարի 19-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնեց, որ նույն օրը ժամը 01:30-ի սահմաններում, Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված Պաշտպանության նախարարության զորամասերից մեկի ինժեներասակրավորային վաշտի կացարանում հրդեհ է բռնկվել, որի հետևանքով մահացել է 15 զինծառայող, ևս 3 զինծառայողի վիճակ գնահատվում է ծանր: https://mil.am/hy/news/11265 , https://mil.am/hy/news/11266

[9] https://hcav.am/wp-content/uploads/2021/11/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80.pdf

[10] https://hcav.am/wp-content/uploads/2022/07/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-2-1.pdf

***իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքերը բացառելու ուղղությամբ կառավարության առավելագույն ջանքերի գործադրմանը: Ներկայումս, սակայն, Զինված ուժերում մահվան դեպքերի թիվը և պատճառները վկայում են զինված ուժերում բարեփոխումների ոչ արդյունավետության մասին:***

*2022 թ. ընթացքում զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են **Հավելված 2-ում:***

**Գծապատկեր 3. 2022 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների ծառայության տեսակն ըստ մահվան պատճառների**




Ըստ աշխարհագրական տարածվածության, նշենք, որ մահացության 64 դեպքից 54-ը (84 %) տեղի է ունեցել ՀՀ տարածքում, 10-ը (16 %)՝ ԱՀ/ԼՂ տարածքում (տե՛ս գծապատկեր 4):

Համեմատության համար՝ 2021 թ. 76 մահվան դեպքերից 62-ը (82 %) տեղի է ունեցել ՀՀ տարածքում, 14-ը (18 %)՝ ԱՀ/ԼՂ տարածքում:

**Գծապատկեր 4. 2022 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների թիվն ըստ մահվան դեպքերի տարածքների**




### *Զինվորական ծառայության հետ կապված և չկապված դասակարգված մահացության դեպքեր*

**ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության** կողմից Կազմակերպությանը տրամադրվել է **63** զինծառայողի մահվան դեպքի մասին տեղեկություն, որոնցից **31-ը** համարվել է զինվորական **ծառայության հետ կապված, 32-ը՝ չկապված:**

Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով մահվան ևս մեկ դեպքի մասին Դատախազությունը չի հայտնել Կազմակերպության գրավոր հարցմանն ի պատասխան: Դեպքը տեղի է ունեցել 2022 թ. սեպտեմբերի 30-ին, երբ ժամկետային զինծառայողը մահացել է ծառայակցի արձակած կրակոցից, ով զինծառայողին շփոթել է հակառակորդի հետ:

Ի դեպ, Կազմակերպությանը այլ պաշտոնական աղբյուրից հայտնի է դարձել ծառայության հետ չկապված ավտովթարի հետևանքով ԱԱԾ սահմանապահ զորքերի մեկ զինծառայողի մահվան մասին ևս, որի վերաբերյալ չի տեղեկացվել դատախազության կողմից: Նշենք, որ դեպքը հաշվառված չէ մահվան թվերի մեջ, քանի որ նախկինում Կազմակերպությունը չի վարել ԱԱԾ զորքերում զինծառայողների մահվան դեպքերի թվի և հանգամանքների ուսումնասիրություն:

Ինչ վերաբերում է «ծառայության հետ չկապված» մահացության դեպքերին, ապա նշենք, որ դատախազության կողմից որպես այդպիսին դասակարգված մահացության 32 դեպքերից Կազմակերպությանը հայտնի է, որ

- 13 դեպքում զինծառայողները մահացել են բժշկական կենտրոնում (9-ը առողջական խնդիրների հետևանքով, 2-ը՝ ավտովթարի, 1-ը՝ ինքնասպանության, 1-ը՝ սպանության),
- 7-ի դեպքում (6-ը առողջական խնդիրների հետևանքով, 1-ը՝ դժբախտ պատահարի) զինծառայողները գտնվել են տանը կամ ազատ հերթափոխում,
- 5 դեպքում (ավտովթար) զինծառայողները գտնվել են այլ անձի վարած մեքենայում որպես ուղևոր,
- 5 դեպքում զինծառայողները վթարի են ենթարկվել սեփական մեքանայով (ավտովթար),
- 1 դեպքում վաժական հավաքներին մասնակցող պահեստազորում հաշվառված անձը ինքնասպանություն է գործել՝ նետվելով բժշկական կենտրոնի լուսամուտից,
- 1 դեպքում վարժական հավաքներին մասնակցող անձը ջրահեղձ է եղել Սևանա լճում:

**ՀՀ քննչական կոմիտեի** (ՔԿ) կողմից Կազմակերպությանը տրամադրվել են 2022 թ. Միայն **32** զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունները, որոնց կապակցությամբ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներում իրականացվում է մինչդատական քրեական վարույթ: Այսինքն, ՀՀ ՔԿ կողմից Կազմակերպությանը տրամադրված տեղեկություններով՝ 32 զինծառայողների մահվան դեպքերը համարվել են զինվորական ծառայության հետ կապված:

Նկատենք, որ ՀՀ քննչական կոմիտեի կողմից Կազմակերպությանը չեն տրամադրվել ***զինծառայողների անունների, ծառայության տեսակի, դեպքերի տարածաշրջանի վերաբերյալ տեղեկություններ՝ մեկնաբանելով, որ դրանք պարունակում են հրապարակման ոչ ենթակա նախաքննության տեղեկություններ***:

***Ի դեպ, 2021 թվականի հուլիս ամսից հետո Կազմակերպության կողմից ՀՀ ՔԿ ուղարկված գրություններին ի պատասխան տրամադրվում է հայցվող տեղեկությունների միայն մի մասը:***

**ՀՀ պաշտպանության նախարարությունը** ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան հայտնել է զինված ուժերում 2022 թ. հունվար - սեպտեմբեր ամիսներին մահացած զինծառայողների միայն թիվը: Միաժամանակ, զինծառայողների անունների, ծառայության տեսակի, մահվան պատճառների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը ՀՀ ՊՆ կողմից մերժվել է՝ համարելով դրանք գաղտնի՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության

մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների:

2022 թվականի հոկտեմբեր - դեկտեմբեր ժամանակահատվածում ՀՀ զինված ուժերում մահացած զինծառայողների վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան պաշտպանության նախարարությունը Կազմակերպությանը որևէ տեղեկություններ չի տրամադրել՝ հայտնելով, որ ՀՀ զինված ուժերում մահացած զինծառայողների վերաբերյալ «պաշտպանական գերատեսչությունը պաշտոնական տեղեկատվություններ տարածել է»:

Իսկ զինծառայողների անունների, ծառայության տեսակի, մահվան պատճառների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը ՀՀ ՊՆ կողմից կրկին մերժվել է հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթների:

***Փաստացի, 2020 թվականի հուլիսից հետո մինչ այժմ՝ 2022 թվականը ՀՀ ՊՆ կողմից կրկին դադարեցվել է մահվան դեպքերի վերաբերյալ հայցվող տեղեկությունների ամբողջական տրամադրումը Կազմակերպությանը, ինչն անհասականալի է, քանի որ նմանատիպ բովանդակությամբ տեղեկությունը մի ժամանակահատվածի դեպքում տրամադրվում է, մյուսի դեպքում այն չի տրամադրվում՝ համարելով գաղտնիք:***

2021 թ օգոստոսից ՀՀ վարչական դատարանում է գտնվում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ զինծառայողների մահվան դեպքերի թվի վերաբերյալ Կազմակերպությանը տեղեկություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջով:

**Նշենք, որ ՀՀ ՊՆ կողմից տեղեկության տրամադրման հարցում մշտապես դրսևորվել է ոչ միատեսակ վարքագիծ:**

Ներկայացնենք վերջին մի քանի տարիներին ՀՀ ՊՆ վարքագիծը՝ մահվան դեպքերի վերաբերյալ Կազմակերպության տեղեկատվության հարցումներին պատասխանելիս:

Այսպես, 2014 թ. Կազմակերպությանը տրամադրվել է միայն թվային տեղեկություն՝ ըստ մահացության պատճառների, սակայն չի տրամադրվել մահացած զինծառայողների անունները, ծառայության տեսակը և մահվան փաստերով նախաձեռնված քրեական վարույթների վերաբերյալ տեղեկություններ: 2015 և 2016 թթ. նույնաբովանդակ հարցմանն ի պատասխան՝ ՊՆ կողմից տեղեկատվության տրամադրումը մերժվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ

օրենքի 12-րդ հոդվածի պահանջների հիման վրա ՀՀ ՊՆ 09.07.2015 թ. N 9-Ն հրամանով հաստատված «ՀՀ պաշտպանության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի» 42-րդ և 43-րդ հոդվածների համաձայն՝ համարելով այն պետական և ծառայողական գաղտնիք:

2017 թ. ՀՀ ՊՆ-ից հարցում է կատարվել է միայն նշված տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին մահացած և Կազմակերպությանը զանգվածային լրատվամիջոցներից և պաշտոնական հաղորդագրություններից հայտնի դարձած որոշ (ըստ անունների) զինծառայողների մահվան դեպքերի փաստերով նախաձեռնված քրեական վարույթների ընթացքի մասին, ինչին ի պատասխան՝ ՀՀ ՊՆ կողմից տեղեկացվել է, որ անհրաժեշտ է դիմել ՀՀ ՔԿ կամ ՀՀ զինվորական դատախազություն:

2018 և 2019 թթ. ՀՀ ՊՆ կողմից տեղեկությունը տրամադրվել է ըստ զինծառայողների անունների, սակայն չի տրամադրվել տեղեկություն զինծառայողների մահացության պատճառների մասին:

2020 թ-ի 1-ին կիսամյակում զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկությունը ՀՀ ՊՆ կողմից տրամադրվել է ըստ անունների, սակայն 2020 թ. պատերազմական գործողությունների հետևանքով մահացության դեպքերի վերաբերյալ տվյալները համարվել են գաղտնի՝ հղում կատարելով «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ կետին՝ «...Տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը...»: 2020 թ. երկրորդ կիսամյակում և 2021 թ. առաջին կիսամյակում մահացության բոլոր (ոչ միայն պատերազմական գործողությունների հետևանքով) դեպքերի վերաբերյալ տվյալների տրամադրումը մերժվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի և ՀՀ ՊՆ 2015 թ. հուլիսի 9-ի թիվ 9-Ն հրամանի հավելված 1-ի 42-րդ և 55-րդ կետերի պահանջների համաձայն:

2021 թ-ի երկրորդ կիսամյակից սկսած մինչև 2022 թ-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ կողմից Կազմակերպության հարցումներին ի պատասխան տրամադրվել է միայն մահացած զինծառայողների թվի և զինծառայության հետ կապված և չկապված դասակարգված դեպքերի թվի վերաբերյալ տեղեկություններ: Իսկ 2022 թ. հոկտեմբերից

դեկտեմբեր ընկած ժամանակահատվածի համար տեղեկություններ ընդհանրապես չեն տրամադրվել:

Ի դեպ, Ցվանեի[11] 20-րդ սկզբունքի համաձայն՝ «տեղեկատվության հարցումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում պետական մարմինը պետք է հարցումներին պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետում գրավոր ներկայացնի մերժման հստակ պատճառները», ինչի մասին ներկայացվել է 2021 թվականին Կազմակերպության «ՀՀ պաշտպանության նախարարության վարքագիծը տեղեկությունների տրամադրման հարցում» տեղեկանքի[12] մեջ, որտեղ առավել մանրամասն անդրադարձել ենք պաշտպանական գերատեսչության կողմից տեղեկությունների տրամադրման և գաղտնիության բարձր մակարդակի հարցին:

*Համեմատելով 2022 թվականի ընթացքում պետական մարմինների կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրած տեղեկությունները՝ արձանագրում ենք հետևյալը.*

- *Դատախազության տեղեկություններով արձանագրվել է 63 զինծառայողի մահվան դեպք, որից 31-ը զինվորական ծառայության հետ կապված, 32-ը՝ չկապված,*
- *ՀՀ քննչական կոմիտեի տեղեկություններով 2022 թ. արձանագրվել է 32 զինծառայողի մահվան դեպք, որոնք համարվել են զինվորական ծառայության հետ կապված: Կառույցի կողմից չի ներկայացվում զինծառայության հետ չկապված դասակարգված մահվան դեպքերի թիվը, քանի որ դրանցով ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներում մինչդատական քրեական վարույթ չի իրականացվում,*
- *ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկություններով՝ արձանագրվել է 42 զինծառայողի մահվան դեպք, որը ներառում է 2022 թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ և ԼՂ տարածքում մահվան դեպքերի թիվը և հուլիս-սեպտեմբերի ամիսներին ՀՀ տարածքում տեղի ունեցած մահվան դեպքերի թիվը: Նշված 42 դեպքերի 23-ը, ըստ ՀՀ ՊՆ-ի, զինվորական ծառայության հետ կապված, 19-ը՝ չկապված:*

*Կարող ենք եզրակացնել, որ 2022 թ զինծառայության հետ կապված մահվան դեպքերի թվի առումով Դատախազության և Քննչական կոմիտեի տրամադրած տեղեկությունները տարբերվում են 1 դեպքով, քանի որ Դատախազության կողմից չի տրամադրվել ծառայության*

[11] https://drive.google.com/file/d/1yz7OryKc3KTszbYmRUzM9CG6lezoel8U/view
[12] https://hcav.am/pn-gaghtniutyun/

*հետ կապված մեկ դեպքի վերաբերյալ տեղեկություն, որը տրամադրվել է ՀՀ քննչական կոմիտեի կողմից:*

*Իսկ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկությունը տարբերվում է նախորդ երկու կառույցների տարմադրած տեղեկություններից, քանի որ այն ամբողջական չէ, այսինքն՝ չի ներկայացնում 2022 թ երկրորդ կիսամյակում ԼՂ/ԱՀ տարածքում տեղի ունեցած մահվան դեպքերի թիվը, իսկ ՀՀ տարածքում մահվան դեպքերի թիվը ներկայացնում է հունվար - սեպտեմբերի ժամանակահատվածի համար:*

*2022 թ. զինծառայողների մահվան փաստերով նախաձեռնված քրեական վարույթների բաշխումն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների*[13]

2022 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում **64 զինծառայողները մահացել են 54 միջադեպի արդյունքում**, որոնցից **44 զինծառայողի մահվան փաստով (34 միջադեպով) նախաձեռնվել են քրեական վարույթներ** հետևյալ հոդվածներով.

- **5-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպանություն դիտավորյալ (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **3-ը**՝ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **3-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (2003 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **2-ը**՝ **(3 զինծառայողի մահվան դեպք)** ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **2-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում (2003 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 6-րդ մասով՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը՝ ռազմական

[13] 2021 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսիրքը (https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080), իսկ 2003 թ. ընդունված օրենսգիրքը (https://www.arlis.am/documentview.aspx?docid=69646 ) ուժը կորցրած ճանաչվեց

դրության, պատերազմի ժամանակ, մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),

- **1-ը՝ (3 զինծառայողի մահվան դեպք)** ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է 2 կամ ավելի մարդու մահ (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը՝** քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն առաջացրել է մարդու մահ (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը՝** քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 1-ին մասով՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից (2003 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 1-ին մասով՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),

- **1-ը՝ (3 զինծառայողի մահվան դեպք)** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետերով՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից երկու կամ ավելի անձանց սպանությունը, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կատարման հետ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով (2003 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը՝ (3 զինծառայողի մահվան դեպք)** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին 7-րդ, 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից ազգային՝ ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով (2003 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը (3 զինծառայողի մահվան դեպք)** ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 15-րդ կետերով՝ զպանություն՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով՝ կապված անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ պարտքի կատարման հետ,
- **1-ը (2 զինծառայողի մահվան դեպք)** ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 15-րդ կետերով՝ սպանություն՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետով՝ սպանությունը՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով (2003 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ (2003 թ. ընդունված քրեական օրենսգիրք),

- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետեր՝ սպանություն՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով՝ կապված անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ պարտքի կատարման հետ (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ (2003 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (2003 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 1-ին մասով՝ զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, ռադիոակտիվ նյութի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութի, սարքի կամ առարկայի հետ վարվելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասով՝ բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք),
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածով մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը (2022 թ. ընդունված քրեական օրենսգիրք):

**34 միջադեպից 31-ով (41 զինծառայողների մահվան փաստով)** նախաձեռնված քրեական վարույթները գտնվում են **նախաքննության** փուլում, **2 միջադեպով (2 զինծառայողի մահվան փաստով)** քրեական վարույթը կարճվել է, **1 միջադեպով (1 զինծառայողների մահվան փաստով)** քրեական վարույթն ավարտվել է և գործն ուղարկվել է դատարան:

**Մյուս 20 միջադեպերի արդյունքում մահացած 20 զինծառայողների մահվան** դեպքերով վարույթներն իրականացվել են տարբեր այլ՝ ոչ զինվորական քննչական վարչությունների և ոստիկանության տարբեր բաժինների կողմից, և հայտնի չէ, թե ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածներով են նախաձեռնվել քրեական վարույթներ կամ արդյոք նախաձեռնվել են, թե ոչ:

*ՀԱՎԵԼՎԱԾ 1.*

*ՀՐԱԴԱԴԱՐԻ ՌԵԺԻՄԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋԱԴԵՊԵՐ*

Անդրադառնալով հրադադարի ռեժիմի խախտման դեպքերին և սահմանային միջադեպերին՝ նշենք, որ 2020 թ. 44-օրյա պատերազմից ավարտից շուրջ մեկ տարի անց՝ 2021 թ. նոյեմբերից Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը սկսեց ինտենսիվ կերպով ապատեղեկություն տարածել՝ իբր հայկական կողմը խախտում է հրադադարի պահպանման ռեժիմը:

2022 թվականի հունվարից Ադրբեջանի կողմից Հայաստանի սահմանին հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը դարձան 3 զինծառայողի մահվան պատճառ:

Խախտման դեպքերը ոչ ամենօրյա պարբերականությամբ շարունակվեցին փետրվարին: Իսկ մարտին ադրբեջանական զինված ուժերն անցան հրադադարի ռեժիմի առավել ծավալուն խախտման. մարտի 7-ին հրադադարի ռեժիմը խախտվեց հայ-ադրբեջանական սահմանին՝ պատճառ դառնալով մեկ զինծառայողի մահվան, իսկ մարտի 24-ին[14] ադրբեջանական զինված ուժերը ներթափանցեցին Արցախի վերահսկողության տակ գտնվող գյուղեր ու բարձունքներ՝ իրենց վերահսկողության տակ վերցնելով Ասկերանի շրջանի Փառուխ գյուղն ու հարակից դիրքերը[15]: Հայկական կողմից զոհվեց 3 զինծառայող:

Սահմանային վիճակը կրկին լարվեց մայիսի 28-ին, երբ ադրբեջանական ԶՈւ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակեցին հայ-ադրբեջանական սահմանի հարավ-արևելյան հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով հրազենային վիրավորում ստացավ պարտադիր ժամկետային զինծառայող, ով հաջորդ օրը մահացավ բժշկական կենտրոնում[16]:

Հունիսին և հուլիսին կրկին ոչ ամենօրյա պարբերականությամբ հրադադարի ռեժիմը խախտվեց, որի հետևանքով ՀՀ սահմանին հունիսին մահացավ ժամկետային զինծառայող:

Իսկ հուլիսի վերջին օրերից սկսած Ադրբեջանի զինված ուժերը հրադադարի ռեժիմը խախտեցին միաժամանակ հայ-ադրբեջանական և ղարաբաղադրբեջանական սահմանին[17]: Օգոստոսի 1-ից Արցախի Հանրապետության հյուսիսային և հյուսիս-արևմտյան

---

[14] https://factor.am/484764.html
[15] https://factor.am/491621.html
[16] https://mil.am/hy/news/10688, https://mil.am/hy/news/10689

[17] https://mil.am/hy/news/10860

սահմանագոտու մի շարք հատվածներում ադրբեջանական զինված ուժերը փորձեցին հատել շփման գիծը[18]:

Սահամանային լարվածությունը շարունակվեց և պահպանվեց մինչև օգոստոսի 5-ը: Ադրբեջանական ստորաբաժանումները կիրառեցին հարվածային անօդաչու թռչող սարքեր, տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ, ականանետեր, նռնականետեր, ինչի հետևանքով մահացավ ՀՀ ԶՈւ  երկու զինծառայող: Նույն օրը Արցախի Հանրապետությունում հայտարարվեց մասնակի զորահավաք[19]:

Ստեղծված իրավիճակում և Ադրբեջանի ճնշման ներքո օգոստոսի 5-ին ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից Աղավնոյի բնակիչներին զգուշացվեց մինչև օգոստոսի 25-ը համայնքը լքելու մասին[20]:

Օգոստոսի 25-ը Լաչինի միջանցքի բնակավայրերը՝ Բերձոր (Լաչին) քաղաքը, Ներքին Սուս և Աղավնո գյուղերը, ինչպես նաև գործող ճանապարհը անցան Ադրբեջանի հսկողության տակ:

Սեպտեմբերի 5-ին հրադադարի ռեժիմի խախտման հետևանով մահացավ ՀՀ ԶՈւ մեկ զինծառայող: Սահմանային լարվածությունը որոշ չափով թուլացավ, սակայն մեկ շաբաթ անց՝ սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը լայնածավալ հարձակում գործեց Հայաստանի հանրապետության սուվերեն տարածքի վրա՝ Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում:

Սեպտեմբերի 14-ի երեկոյան ժամը 20-ի դրությամբ ՀՀ ՊՆ-ն տեղեկացրեց, որ բոլոր ուղղություններով կրակը գրեթե դադարել է, էական միջադեպեր չեն արձանագրվել: Սեպտեմբերի 15-ին Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը Հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերում հայտնեց, որ միջազգային հանրության ներգրավվածության շնորհիվ հաջողվել է ձեռք բերել կրակը դադարեցնելու պայմանավորվածություն:

Բացի մարդկային կորուստներից հայկական կողմը սեպտեմբերի 13-ի ադրբեջանական հարձակման հետևանքով ունեցավ նաև դիրքային կորուստներ, ինչի մասին սեպտեմբերի 16-ին հայտնեց ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Էդվարդ

[18] https://factor.am/539675.html , https://factor.am/539675.html
[19] https://factor.am/540439.html
[20] https://factor.am/541252.html

Ասրյանը՝[21] հայտնելով, որ ադրբեջանական ուժերը մի քանի ուղղություններով «մխրճվել են» ՀՀ ինքնիշխանտարածք, այդ թվում՝ մինչև 7,5 կմ խորությամբ Ջերմուկի ուղղությամբ, 1-1,5 կմ խորությամբ՝ Վերին Շորժայի ու Ներքին Հանդի ուղղությամբ, 0,5 կմ՝ Իշխանասարի ուղղությամբ:

Ի դեպ, ադբեջանական զինված ուժերը մինչ այժմ՝ 2022 թ. հոկտեմբերի դրությամբ շարունակում են մնալ օկուպացրած դիրքերում: Ի դեպ, 2021 մայիսին Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանում՝ Նորաբակ-Քարվաճառ ճանապարհից մինչև Մեծ ու Փոքր Ալ լճեր ընկած սահմանային հատվածում, նրանք օկուպացրեցին ՀՀ սուվերեն տարածքի առնվազն 32 քառակուսի կմ տարածք[22]:

Մի քանի օր հրադադարի ռեժիմի խախտման դեպքեր չարձանագրվեցին: Այս ժամանակահատվածը համընկավ սեպտեմբերի 18-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի նախագահ Նենսի Փելոսիի գլխավորած պատվիրակության Հայաստան ժամանման հետ: Նենսի Փելոսիի Հայաստանից մեկնելու հաջորդ օրը՝ սեպտեմբերի 20-ին Ադրբեջանը գրեթե մեկշաբաթյա լռությունից հետո կրկին խախտեց հրադադարի ռեժիմը: Սահմանային լարված իրավիճակը՝ ուղեկցվելով նաև հայ-ադրբեջանական սահմանն անցնելու ադրբեջանական ստորաբաժանումների փորձով, շարունակվեց մինչև սեպտեմբերի 28-ը: Արդյունքում զոհվեց ՀՀ ԶՈւ երեք զինծառայող:

Հոկտեմբերի 18-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկություն տարածեց՝ հայտնելով, որ գիշերային դիտարկման և վերլուծության արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական ստորաբաժանումները հրադադարը խախտում են նախ կրակելով միմյանց, ապա՝ հայկական դիրքերի ուղղությամբ՝ տպավորություն ստողծելով՝ իբր հայկական կողմն է կրակում ադրբեջանական հենակետերի ուղղությամբ, ապա սկսում տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ բացել հայկական դիրքերի ուղղությամբ՝ իբր ի պատասխան Հայաստանի կողմից հրադադարի ռեժիմի խախտման:[5]

2020 թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում Եվրոպական քաղաքական համայնքի առաջին գագաթնաժողովի շրջանակներում կայացած Փաշինյան-Ալիև-Մակրոն-Միշել քառակողմ հանդիպումից[23] հետո Հայաստան ուղարկվեց ԵՄ մոնիթորինգային

[21] https://www.azatutyun.am/a/32036710.html
[22] https://hetq.am/hy/article/144181
[23] https://hetq.am/hy/article/149039

առաքելությունը: 2020 թ. հոկտեմբերի 20-ին[24] ԵՄ դիտորդական առաքելությանը 40 դիտորդ-փորձագետները տեղակայվեց Հայաստանում՝ Ադրբեջանի հետ միջազգային սահմանի երկայնքով՝ իրականացնելով երկու երկրների միջև սահմանամերձ շրջաններում տիրող իրավիճակի դիտարկում՝ ռազմական դիրքերի և հրադադարի վերաբերյալ զարգացումների առնչությամբ կանոնավոր և իրավիճակային զեկուցումների միջոցով: Դիտորդ-փորձահետներն իրենց առաքելությունն ավարտվեցին դեկտեմբերի 19-ին: Երկու ամիսների ընթացքում հայ-ադրբեջանական սայմանին միջադեպերի ինտնսիվությունը որոշակիորեն նվազեց: Այնուամենայնիվ, Ադրբեջանի կողմից ողջ ընթացքում շարունակվում էին տարածվել կեղծ հաղորդագրություններ այն մասին, թե իբր հայկական կողմն է խախտում հրադադարի պահպանման ռեժիմը: 2022 թ. նոյեմբերի 8-ին Ադրբեջանի նախագահը Շուշիմում իր ելույթի ժամանակ հայտարարելով, որ Ադրբեջանի ռազմական բյուջեն կհասնի ռեկորդային ցուցանիշի, կրկին Հայաստանին մեղադրեց՝ 2020 թ նոյեմբերի 9-ին եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունների չպահպահման մեջ՝ ակնարկելով, թե իբր իբր «Հայաստանում գլուխ են բարձրացնում ռևանշիստական ուժերը, ովքեր չեն ցանկանում հաշտվել պատերազմի արդյունքների հետ»[25]:

«Ազատություն» ռադիոկայանի աղբյուրների տվյալներով 2023 թ. հունվարի սկզբին Եվրոպական խորհրդի Քաղաքական ու անվտանգության հանձնաժողովի «Ճգնաժամերի կառավարման քաղաքացիական հարցերի հանձնախմբում» ընդունվել և հաստատվել է նախագիծ Հայաստանում դիտորդական առաքելության նոր խումբ տեղակայելու մասին՝ առնվազն երկու տարով: Ի տարբերություն նախորդ առաքելության, այս անգամ դիտորդները պարեկություն կիրականացնեն Հայաստանի ողջ տարածքում:

2022 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրկին կրակ բացեցին հայ-ադրբեջանական սահմանի արևելյան հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: Միաժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տարածում էր հաղորդագրությունններ այն մասին, թե իբր ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները կրակ են բացում ադրբեջանական դիրքերի և տրանսպորտային միջոցի ուղղությամբ, ինչը

[24] https://euneighbourseast.eu/hy/news/latest-news/hayastanum-em-ditordakan-arraqelutyuny-sksel-e-gorcuneutyuny/
[25] https://www.aravot.am/2022/11/08/1303232/

հերքվում եր ՀՀ պաշտպանության նախարարության հաղորդագրություններով, քանի որ այն չէր համապատասխանում իրականությանը։ Այս կերպ Ադրբեջանը փորձում է հրադադարի ռեժիմի խախտման ու սահմանային լարվածության մեջ մեղադրել ՀՀ զինված ուժերին։

Նոյեմբերի 18-ին Արցախի Ներքին գործերի նախարարության հաղորդմամբ, ադրբեջանական մարտական դիրքից կրակեցին Հացի գյուղի դաշտում գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող քաղաքացու ուղղությամբ, ինչի պատճառով գյուղատնտեսական աշխատանքները դադարեցվել են։

2022 թվականի դեկտեմբերի 3-ին բնապահպան ներկայացող ադրբեջանցիները 4 ժամով փակեցին Արցախ-Հայաստան ճանապարհը, որը բացվեց հայկական, ռուսական և ադրբեջանական կողմերի բանակցությունների արդյունքում։

Օրեր անց՝ դեկտեմբերի 12-ին քաղաքացիական հագուստով մի քանի տասնյակի հասնող ադրբեջանցիներ, ներկայանալով որպես բնապահպաններ, փակեցին փակեցին Գորիս - Ստեփանակերտ ճանապարհի Լաչինի միջանցքի հատվածը։

Մինչ այժմ՝ 2023 թ. հունվար ամիսը ճանապարհը շարունակում է փակ մնալ։

Բնապահպանական կեղծ պատրվակներ ներկայացնող ադրբեջանցիները հայտարարում են, թե ցանկանում են մտնել Արցախի բնակավայրեր և մոնիթորինգ իրականացնել հանքավայրերում[26]։ Վերջիններս ստուգումներ են պահանջում Կաշենի ու Դրնբոնի հանքավայրերում իբր «էկոցիդը» կանխելու նպատակով։

Անկախ լրատվամիջոցները կարճ ժամանակում բացահայտեցին, որ հավաքվածներն իրականում բնապահպանության հետ որևէ կապ չունեն, ինչպես նաև ցույցերի և ակցիաների երբևէ չեն մասնակցել[27]։

Սադրանքները Ադրբեջանի կողմից միայն ճանապարհի փակելով չսահմանափակվեցին, քանի որ Ադրբեջանի իշխանություններն ամեն կերպ փորձում են կաթվածահար անել արցախահայության կյանքի բնականոն ընթացքը։ Այսպես, դեկտեմբերի 13-ի երեկոյան Արցախի տեղեկատվական շտաբը հաղորդեց, որ Ադրբեջանը դադարեցրել է Արցախի գազամատակարարումը։ Ստեփանակերտն այն համարեց

---

26 https://factor.am/586130.html

27 https://www.azatutyun.am/a/32218266.html

«հումանիտար ու տնտեսական աղետի՝ որը հետևողականորեն իրականացնում է Ադրբեջանը Արցախի խաղաղ բնակիչների դեմ»[28]:

Դեկտեմբերի 16-ին միայն Արցախում վերականգնվեց գազի մատակարարումը: 2023 թ. հունվարի 17-ին գազամատակարարումը կրկին դադարեցվեց:

Շրջափակման մեջ գտնվող Արցախի մթերային խանութները գրեթե դատարկվեցին: Առաջին անհրաժեշտության սննդամթերքի և որոշ ապրանքների բաշխման համար Արցախում անցան կտրոնային համակարգի: Պատճառն այն է, որ պահուստային պաշարից խանութներին մատակարարվող մթերքը չի բավարարում բոլորին:

Հունվարի 9-ին  Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Աղավնո-Բերձոր հատվածով անցնող միակ բարձրավոլտ գծի վթարի հետևանքով Արցախում հովհարային անջատումներ սկսվեցին: «Արցախէներգոյից» հայտնում են, որ այս պահին բնակիչներին տեղական արտադրության հոսանք է մատակարարվում: Կան կասկածներ, որ վթարը միտումնավոր է կազմակերպվել, քանի որ մինչև Աղավնոյի Ադրբեջանին հանձնելը, այդ հատվածում էլեկտրաէներգիայի  որևէ խնդիր չի եղել :

Հունվարի 12-ից  համացանցի ու բջջային կապի խափանումները նոր խնդիրներ առաջացրեցին Արցախում:

«Օգտվելով այն հանգամանքից, որ դեպի Արցախ եկող ենթակառուցվածքներն անցնում են ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող տարածքներում, ադրբեջանական կողմը միտումնավոր կաթվածահար է անում կենսական նշանակության ենթակառուցվածքների աշխատանքը, որի վառ ապացույցն են գազամատակարարման խաթարումները (2022 թ. մարտ, 2022 դեկտեմբեր), էլեկտրական բարձրավոլտ լարերի վերականգնմանը հունվարի 9-ից խոչընդոտելը, Արցախի տարածքում համացանցի և բջջային կապի պարբերական խաթարումները», - նշում է Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը[29]:

Այսպես, դեկտեմբերի 12-ից մինչ այս պահը՝ 2023 թ. հունվարը՝ ավելի քան մեկ ամիս Արցախը Հայաստանին կապող միակ ցամաքային ճանապարհը շարունակում է մնալ փակ:

[28] https://www.azatutyun.am/a/32217075.html
[29] https://www.azatutyun.am/a/32221922.html

Հայաստանի և Արցախի Մարդու իրավունքների պաշտպանները հրապարակել են Լաչինի միջանցքի արգելափակման հումանիտար հետևանքների վերաբերյալ արտահերթ զեկույց[30], որում նշում են, թե «հայատյացության ու հենց Արցախի հայության նկատմամբ էթնիկ ատելության հրահրման ու բորբոքման փորձված մեթոդները լայնորեն կիրառվում են ադրբեջանական իշխանական քարոզչամեքենայի կողմից՝ դրանք փորձելով տեղավորել կեղծ բնապահպանական սենտիմենտների համատեքստում»:

---

30 https://ombuds.am/images/files/c01555c03620fb8494eaef308fe9ca15.pdf?fbclid=IwAR3yAEBlapS7WlgrCgFZ8zZ6SeKRvFh8b9H2rONXKQ3geyZ4hVR2H89n1eM

## ՀԱՎԵԼՎԱԾ *2.*

## 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ԵՎ ԱՀ/ԼՂ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. **Արթուր Մխիթարյան**
2. **Ռուդիկ Ղարիբյան**
3. **Վահան Բաբայան**

*ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ 2022 թ. հունվարի 11-ին հայ-ադրբեջանական սահմանի արևելյան ուղղությամբ ադրբեջանական կողմի կրակոցի հետևանքով զոհվել են ՀՀ ՊՆ զորամասերից մեկի զինծառայողներ, շարքային Արթուր Արտյոմի Մխիթարյանը և կրտսեր սերժանտ Ռուդիկ Ռաֆիկի Ղարիբյանը*[31]*: Հետագայում հայտնաբերվել է նաև ՀՀ ԶՈւ զինծառայող՝ շարքային Վահան Վաչագանի Բաբայանի մարմինը:*

Զինծառայողների մահվան փաստով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետերով: Կատարվում է նախաքննություն:

4. **Հրաչ Մանասարյան**

*Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2022 թ. մարտի 7-ին Ադրբեջանի ԶՈւ ստորաբաժանումները կրակել են հայ-ադրբեջանական սահմանի արևմտյան հատվածում (Երասխ) տեղակայված հայկական մարտական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով ՀՀ ՊՆ զորամասերից մեկի պայմանագրային զինծառայող,*

[31] https://mil.am/hy/news/10265

*սերժանտ Հրաչ Արամի Մանասարյանը ստացած վիրավորման արդյունքում մահացել է հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին: Եվս մեկ զինծառայող վիրավորվել է[32]:*

Հրաչ Մանասարյանը Գորիս համայնքի Ակներ բնակավայրից էր: Նա մասնակցել էր 44-օրյա պատերազմին[33]:

ՀՀ քննչական կոմիտեի տեղեկացմամբ՝ Հրաչ Մանասարյանի սպանության, ինչպես նաև մյուս զինծառայողի հրազենային վիրավորում ստանալու դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 13-րդ կետերով:

ՀՀ ՔԿ-ի տեղեկությունների համաձայն՝ զինծառայողը զոհվել է զորամասի պահպանության տեղամասի մարտական հենակետում ինժեներական աշխատանքներ կատարելիս:

Կատարվում է նախաքննություն[34]:

5. **Դավիթ Միրզոյան**
6. **Իշխան Օհանյան**
7. **Արարատ Թևոսյան**

*ԱՀ/ ԼՂ պաշտպանության բանակի տարածած հաղորդագրության համաձայն՝ 2022 թ. մարտի 25-ին հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ ադրբեջանական զինված ուժերի Բայրակթար TB-2 տեսակի հարվածային անօդաչու թռչող սարքերի կիրառման հետևանքով մահացել են ՊԲ պայմանագրային զինծառայողներ Դավիթ Ռոբերտի Միրզոյանը, Իշխան Սերժիկի Օհանյանը և Արարատ Վագիֆի Թևոսյանը[35]:*

---

[32] https://mil.am/hy/news/10416
[33] https://iravaban.net/372666.html
[34] https://www.investigative.am/news/view/zincarayoxi-spanutyun-hakarakordi-koxmic.html
[35] https://factor.am/492060.html, https://www.facebook.com/artsakhdefencearmy/posts/pfbid02PfkWeLNc5qy6fent3hhepCexR6XTA7p3RmesjDziVYjhJ1AwpLotidXeMY26vVzvl

Զինծառայողի մահվան փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին 7-րդ, 13-րդ կետերով, ինչպես նաև 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով:

Կատարվում է նախաքննություն:

8. **Դավիթ Վարդանյան**

*Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2022 թ. մայիսի 28-ին ադրբեջանական ԶՈւ ստորաբաժանումների կրակոցների հետևանքով մահացել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Դավիթ Վահանի Վարդանյանը[36]:*

ՀՀ ՔԿ տարածած հաղորդագրության[37] համաձայն՝ Դավիթ Վարդանյանը հրազենազնդակային վիրավորում է ստացել ձախ ոտքի աճուկային շրջանում և մահացել Կապանի բժշկական կենտրոնում:

Զինծառայողի սպանության դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ զինծառայողը մահացել է ոտքից վիրավորվելու հետևանքով, ՀՀ քննչական կոմիտեի մամուլի ծառայությունից լրատվամիջոցներից մեկին (epress.am) տեղեկացրել են, որ վնասվել է զինծառայողի ազդրային անջատվող զարկերակը, ինչի արդյունքում սկսվել է առատ արնահոսություն, որի հետևանքով զինծառայողը մահացել է[38]:

9. **Գուրգեն Գաբրիելյան**

10. **Արթուր Խաչատրյան**

[36] https://mil.am/hy/news/10688
[37] https://www.investigative.am/news/view/davit-vardanyan.html
[38] https://epress.am/2022/05/31/davit_vardanyan_qk.html

*2022 թ. օգոստոսի 3-ին ՀՀ Արցախի պաշտպանության նախարարությունը հաղորդագրություն տարածեց[39] այն մասին, որ ժամը 09:00-ից սկսած ադրբեջանական ստորաբաժանումները խախտել են հրադադարի պահպանման ռեժիմը՝ թիրախավորելով ՊԲ մարտական դիրքերն ու զորամասերից մեկի մշտական տեղակայման վայրը՝ կրակ արձակելով տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից, կիրառելով ականանետեր, նռնականետեր և հարվածային ԱԹՍ-ներ, ինչի հետևանքով մահացու վիրավորում են ստացել ՊԲ զինծառայողներ սպա Գուրգեն Գալերիի Գաբրիելյանը և ենթասպա Արթուր Յուրիի Խաչատրյանը: Եվս 14 զինծառայող տարբեր աստիճանի վիրավորումներ է ստացել:*

Արթուր Խաչատրյանը Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղից էր: Գուրգեն Գաբրիելյանը՝ Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղից էր, նախկին գյուղապետը:

Ըստ Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալների՝ կազմվել է արձանագրություն քրեական վարույթ նախաձեռնելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 15-րդ կետերի:

11. **Արման Սարգսյան**

*ՀՀ պաշտպանության նախարարության տարածած[40] տեղեկության համաձայն՝ 2022 թ. սեպտեմբերի 5-ի երեկոյան հայ-ադրբեջանական սահմանագոտու արևելյան հատվածում տեղակայված մարտական դիրքում հակառակորդի արձակած կրակոցից մահացել է պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Արման Գագիկի Սարգսյանը:*

Ըստ Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալների՝ կազմվել է արձանագրություն քրեական վարույթ նախաձեռնելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետի:

12. **Նահապետ Մարգարյան**
13. **Հովհաննես Սուքիասյան**

[39] https://www.facebook.com/artsakhdefencearmy/posts/pfbid037ton3yjFPhtfMRoaVyCvZBXT3cxP6FYrJjY3Lo8moy6vkRmhrb1VjhV3MzVSt7uHl
[40] https://mil.am/hy/news/10990

14. **Էդվարդ Հովհաննիսյան**

*ՀՀ պաշտպանության նախարարության տարածած[41] հաղորդագրության համաձայն՝ 2022 թ. սեպտեմբերի 28-ին՝ ժամը 18:00-ից սկսած, Ադրբեջանի ԶՈւ ստորաբաժանումները ականանետերի և խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակների կիրառմամբ կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի արևելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքերի ուղղությամբ, որի հետևանքով զոհվել է 3 զինծառայող՝ սպա, փոխգնդապետ Նահապետ Նվերի Մարգարյանը, պայմանագրային զինծառայող, սերժանտ Հովհաննես Փայլակի Սուքիասյանը և ժամկետային զինծառայող, շարքային Էդվարդ Հայկի Հովհաննիսյանը[42]:*

Ըստ Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալների՝ կազմվել է արձանագրություն քրեական վարույթ նախաձեռնելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 15-րդ կետերի։

**Բ.Ինքնասպանություն**

**Զինվորական ծառայության հետ կապված**

1. **Ալբերտ Սիրոյան**

*ՀՀ ՊՆ կողմից տարածած տեղեկության համաձայն՝ 2022 թ. մարտի 16-ին ՀՀ հարավ-արևելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքերից մեկում հայտնաբերվել է ՀՀ ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Ալբերտ Լևոնի Սիրոյանի մարմինը՝ ծնոտի շրջանում հրազենային վնասվածքով[43]:*

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնում դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով։

ՀՀ ՔԿ-ի նախնական տվյալներով՝ Ալբերտ Սիրոյանը մահացու վնասվածքը ստացել է զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում իրեն ամրակցված ԱԿ-74 տեսակի ինքնաձիգից կզակի շրջանում արձակած կրակոցից։

[41] https://mil.am/hy/news/11068
[42] https://mil.am/hy/news/11071
[43] https://mil.am/hy/news/10444

Կատարվում է նախաքննություն[44]:

## 2. Էդուարդ Ռուստամյան

*ՀՀ ՊՆ կողմից տարածած տեղեկության համաձայն՝ 2022 թ. մարտի 17-ին հարավային ուղղությամբ տեղակայված ՀՀ ՊՆ զորամասերից մեկի տարածքում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, շարքային Էդուարդ Ռազմիկի Ռուստամյանի մարմինը[45]:*

Զինծառայողի մահվան փաստով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ[46]:

## 3. Արգիշտի Եղյան

*ՀՀ ՊՆ կողմից տարածած տեղեկության համաձայն՝ 2022 թ. մայիսի 11-ին ՀՀ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարտական հենակետերից մեկում հայտնաբերվել է շարքային Արգիշտի Արմենի Եղյանի (ծնվ. 2002 թ.) մարմինը[47]:*

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով[48]:

ՀՀ քննչական կոմիտեի նախնական տվյալներով՝ հրաձիգ-նռնականձիգի օգնական, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Արգիշտի Արմենի Եղյանը, նույն զորամասի պահպանության տեղամասում գտնվող մարտական դիրքի դիտակետում իրեն ամրակցված ինքնաձիգից կրակոց արձակելով կրծքավանդակի շրջանին, ինքնասպան է եղել:

Զինծառայողի երկու համածառայակիցները ձերբակալվել են՝ զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու

---

[44] https://www.investigative.am/news/view/zinvori-mah-a-siroyan.html
[45] https://mil.am/hy/news/10446
[46] https://www.investigative.am/news/view/zinvori-mah-a-siroyan.html
[47] https://mil.am/hy/news/10619
[48] https://www.investigative.am/news/view/zinvor-argishti-yeghyan.html

արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելու կասկածանքով:

Կատարվում է նախաքննություն:

## 4. Արսեն Մանուկյան

ՀՀ ՊՆ կողմից տարածած տեղեկության համաձայն՝[49] 2022 թ. հուլիսի 14-ին, ժամը 10:25-ի սահմաններում, ՀՀ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարտական դիրքում հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Արսեն Արմենի Մանուկյանի մարմինը՝ գլխի շրջանում հրազենային վիրավորումով:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով[50]: Քրեական վարույթի շրջանակներում ձերբակալվել է զինծառայողի համածառայակիցը[51]:

## 5. Էրիկ Ղարսյան

ՀՀ ՊՆ կողմից տարածած տեղեկության համաձայն՝ 2022 թ. օգոստոսի 9-ին ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի կրակային դիրքում հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Էրիկ Արմենի Ղարսյանի մարմինը[52]:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի հաղորդագրության[53] պարզվել է, որ Էրիկ Ղարսայանը կյանքի հետ անհամատեղելի հրազենային մարմնական վնասվածքը ստացել է կրակային դիրքում՝ իրեն ամրակցված «АКМ» տեսակի ինքնաձիգից իր կրծքավանդակի շրջանում արձակած կրակոցի արդյունքում: Նույն օրը զինծառայողը տեղափոխվել է բժշկական կենտրոն, որտեղ արձանագրվել է վերջինիս կենսաբանական մահը:

[49] https://mil.am/hy/news/10851
[50] https://investigative.am/news/view/zincarayogh-arsen-manukyan.html
[51] https://m.mamul.am/am/news/244555
[52] https://mil.am/hy/news/10924
[53] https://www.investigative.am/news/view/erik-xarsayan.html

Նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 1-ին մասով:

**Ինքնասպանություն**
**Զինվորական ծառայության հետ չկապված**

**6. Սարգիս Գրիգորյան**

*Պահեստազորային զինծառայող Սարգիս Գրիգորյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:*

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությունից: Մասնավորապես՝ Կազմակերպությանը հայտնել են, որ Սարգիս Գրիգորյանը 2022 թ. մայիսի 20-ին «փսիխոտիկ խանգարում ?» ախտորոշմամբ ընդունվել է հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք, հունիսի 1-ին «Ալկոհոլային էնցեֆալոպաթիա» ախտորոշմամբ տեղափոխվել ՀՀ ԱՆ Կախվածությունների բուժման ազգային կենտրոն և հունիսի 9-ին ինքնասպանություն է գործել՝ ցած նետվելով նույն կլինիկայի երրորդ հարկից:

Դեպքով վարույթն իրականացվում է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Նոր Նորքի բաժնի կողմից:

**Գ. Սպանություն**
**Զենքի հետ վարվելու կանոնների խախտում**

**Ծառայության հետ կապված**

1. **Սամվել Սանոյան/ Սանեյան**

*ՀՀ ՊՆ կողմից տարածված տեղեկության համաձայն՝ 2022 թ. ապրիլի 28-ին համածառայակցի կողմից արձակված կրակոցից հրազենային վիրավորում է ստացել ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սամվել Սեդրակի Սանոյանը (ծնվ.՝2002թ.): Հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին շարքային Սանոյանը մահացել է[54]:*

[54] https://mil.am/hy/news/10577

ՀՀ ՔԿ կողմից հաղորդագրությամբ տեղեկացվել է, որ զինծառայողը մահացել է ծառայակցի կողմից զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով։ Սամվել Սանեյանի (ՀՀ ՊՆ՝ Սանոյան) մահվան դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով[55]։

Զինծառայողը Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքից էր։ Ըստ factor.am-ին զինծառայողի համագյուղացիներից մեկի հայտնած տվյալի՝ Սամվել Սանեյանը զորակոչվել էր զինծառայության 2021 թվականի հունիսին, ծառայում էր Մեղրիում։ Համագյուղացիների տեղեկություններով՝ Ս. Սանոյանը ծառայակիցների հետ կոնֆլիկտ չի ունեցել։ Դեպքից մոտ երեք շաբաթ առաջ արձակուրդ էր եկել։ Դեպքի պահին զինծառայողը գտնվել է մարտական հերթապահության մեջ[56]։

**Դիտավորյալ**

**2. Միսակ Պետրոսյան**

*2022 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության համաձայն պահեստազորային Միսակ Պետրոսյանը սպանվել է մեկ այլ պահեստազորայինի կողմից։*

Ըստ Քննչական կոմիտեի՝ մարտական դիրքում շարքային պահեստազորայինը վիճաբանել էր 35-ամյա Պետրոսյանի հետ, կրակել նրա գլխին, ապա՝ ինքն իր ոտքին։

Պահեստազորայինը կալանավորված է։

Գործով կազմվել է արձանագրություն քրեական վարույթ նախաձեռնելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով և 528-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով, նախաքննությունը շարունակվում է։

Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը լրագրողների հետ զրույցում անդրադարձել էր դեպքին՝ այն որակելով որպես միջանձնային հարաբերությունների հետևանք։ Էդվարդ Ասրյանը մեջբերելով արտահայտությունը, թե «բանակը ազգի հայելին է», նշել էր, որ իրենք անում են ամեն ինչ զինված ուժերը բարեփոխելու համար։

[55] https://www.investigative.am/news/view/zinvori-mah-dzerbakalum0.html
[56] https://factor.am/505545.html

**Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում**

**Ծառայության հետ կապված**

**3. Հրաչ Փիլիպոսյան**

*Ըստ factor.am-ի տվյալների՝ 2022 թ. հունիսի 18-ին Ադրբեջանի զինված ուժերը կրակոցներ են արձակել Վարդենիսի ուղղությամբ, ինչի հետևանքով ժամկետային զինծառայող է զոհվել: ՀՀ պաշտպանության նախարարությունից լուրը հաստատել են լրատվամիջոցի հետ զրույցում՝ հայտնելով, որ ՊՆ-ն մանրամասները կներկայացնի ավելի ուշ[57]:*

Այնուամենայնիվ, զինծառայողի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն այդպես էլ չի տարածվել:

Ի դեպ, Վարդենիսի ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը դեպքից ժամեր անց հայտարարեց, որ զինծառայողը զոհվել է հակառակորդի կրակոցից: Պաշտպանության նախարարությունը, սակայն, այդ մասին հաղորդագրություն ևս չտարածեց:

«Ազատություն ռադիոկայանի»[58] հետ զրույցում զինծառայողի մորեղբայրը՝ Աշոտ Խաչատրյանը հայտնեց, որ զինծառայողի մարմինը ծնողներին զինկոմիսարիատն է փոխանցել: Հարազատներին հայտնի է դարձել, որ զինծառայողը մահացել է շտապօգնության մեքենայում:

ՀՀ քննչական կոմիտեից լրատվամիջոցին հայտնել են, որ նախ անհրաժեշտ է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պաշտոնապես հաղորդագրության տարածումը, որից հետո իրենց անդրադարձը: Քանի որ այդպիսի հաղորդագրություն չի եղել, ապա քննչական կոմիտեն զինծառայողի մահվան մասին լուրը չի կարող տարածել:

Զինծառայողի հարազատները ծառայակիցներից իմացել են, որ զինծառայողը ստացել է հրազենային և բեկորային վնասվածքներ: Ծառայակիցները նաև հայտնել են, որ շտապօգնության մեքենան մարտական դիրքեր բարձրանալու հնարավորություն չի ունեցել և ծառայակից ընկերները նրան պատգարակով մոտ 200 մետր իջեցրել դեպի մեքենան:

---

[57] https://factor.am/524440.html
[58] https://www.azatutyun.am/a/31909947.html

Հրաչ Փիլիպոսյանի մահվան փաստով նախ նախաձեռնվել էր քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 6-րդ, 7-րդ, 13-րդ կետերի հատկանիշներով[59], սակայն 2023 թ. հունվարի 5-ին Դատախազությունից Կազմակերպությանը հայտնած տեղեկության համաձայն՝ 2022 թվականի հոկտեմբերի 3-ին Հրաչ Փիլիպոսյանի մահվան դեպքով հաշվառումը «Սպանություններ շփման գծում» բաժնից տեղափոխվել է «Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտումներ» (ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդված)։

## 4. Հրաչյա Քարամյան

*2022 թ. սեպտեմբերի 30-ին՝ ՀՀ ՊՆ զորամասերից մեկի մարտական դիրքում հրազենային վնասվածքի հետևանքով մահացել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Հրաչյա Տիգրանի Քարամյանը (ծնվ. 2003թ.)[60]։*

ՀՀ քննչական կոմիտեի տվյալներով՝ զորամասի մարտական դիրքում հերթապահության ընդգրկված ժամկետային զինծառայողը, ոտնաձայներ լսելով, մտածել է, թե մոտեցողը հակառակորդի ԶՈՒ զինծառայող է և խախտելով մարտական հերթապահության կրման վերաբերյալ ՀՀ ՊՆ համապատասխան հրամանով սահմանված կանոնները՝ իրեն ամրակցված «АКМ» տեսակի ինքնաձիգից կրակահերթ է արձակել ծառայակցի ուղղությամբ, ինչի հետևանքով վերջինս մահացել է։

Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով՝ կրակոցներ արձակած զինծառայողը ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հանցանք կատարած լինելու կասկածանքով ձերբակալվել է[61]։

Ձերբակալված ծառայակցի փաստաբանը aravot.am-ի հետ զրույցում[62] հայտնել է, որ դեպքի օրը ուշ ժամին զինծառայողները մթության մեջ շրջել են խրամատում, ծառայակից ընկերներից մեկը առանց տեղեկացնելու մուտք է գործել խրամատաբջիջ, քիչ անց ձերբակալված զինծառայողը լսել է ոտնաձայներ և հաշվի առնելով, որ տվյալ խրամատաբջջի դիրքն այնպիսին է եղել, որ հակառակորդը կարող էր դիմացից մուտք

[59] https://www.azatutyun.am/a/31911805.html
[60] https://mil.am/hy/news/11075
[61] www.investigative.am/news/view/зинцараыоь-анзгусхутыамб-мах.html
[62] https://www.aravot.am/2022/10/11/1297085/

գործել ու չնկատվել, այդ հանգամանքների ազդեցության տակ ու հոգեբանական վախի մթնոլորտում կրակ է բացել իր լսած ձայների ուղղությամբ: Հետո մուտք գործելով խրամատաբջիջ՝ տեսել է, որ ներսում ոչ թե հակառակորդն է, այլ իր զինակից ընկերը՝ դիրքի ավագը:

Ըստ փաստաբանի՝ դիրքը կահավորված չի եղել համապատասխան լուսավորությամբ, զինծառայողները չեն ունեցել համապատասխան լապտերներ՝ ավելի ընդարձակ տեսանելիություն ապահովելու համար:

5. **Վահե Հովսեփյան**

*Ժամկետային զինծառայող Վահե Հովսեփյանի մահվան վերաբերյալ ՀՀ ՊՆ կողմից տարածվել է հաղորդագրություն:*

*Կազմակերպությանը պաշտոնական աղբյուրից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2022 թ. նոյեմբերի 15-ին ժամը 03:20-ի սահմաններում ՀՀ ՊՆ զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում «տագնապ» ազդանշանի ընթացքում Վահե Հովսեփյանի ծառայակից պարտադիր ժամկետային զինծառայողը այլ զինծառայողի ինքնաձիգից կրակահերթ է արձակել, ինչի հետևանքով դիտարկման համար գետնատնակի տանիք բարձրացած դիրքի ավագ, շարքային Հովսեփյանը ստացել է հրազենային վիրավորում, և մահացել է շուրջ մեկ ժամ անց՝ հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին:*

Նախաձեռնված քրեական վարույթով ծառայակցի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 6-րդ մասով, նախաքննությունը շարունակվում է:

**Ծառայության հետ չկապված**

6. **Հմայակ Միքայելյան**

*Պայմանագրային զինծառայող Հմայակ Միքայելյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությունից: Կազմակերպությանը հայտնել են, որ*

*2022 թ. հունիսի 19-ին Հմայակ Միքայելյանը Արագածոտնի մարզի Նիգավան գյուղի մոտակայքում «քաղաքացիների հետ տեղի ունեցած վիճաբանության ընթացքում ստացել է հրազենային վիրավորում, տեղափոխվել Ապարանի ԲԿ, որտեղ գիտակցության չգալով՝ մահացել է:*

Զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության կողմից:

**Դ. Առողջական խնդիրներ**
**Ծառայության հետ կապված**

1. **Հովսափ Պողոսյան**

*Պայմանագրային զինծառայող Հովսափ Պողոսյանի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:*

*Դատախազությունից Կազմակերպությանը տեղեկացրել են, որ 2022 թ. հունվարի 7-ին զինծառայողի ինքնազգացողությունը վատացել է զորամասում, և նա տեղափոխվել է բուժկետ, որտեղ վերջինիս մոտ արձանագրվել է բարձր ճնշում: Ըստ Դատախազության՝ զինծառայողը բուժկետում ստացել է առաջին բուժօգնություն և Մարտունու շրջանային հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել:*

Զինծառայողի մահվան փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով: Կատարվում է քննություն:

2. **Ատոմ Հարությունյան**

*ՀՀ ՊՆ տարածած տեղեկության համաձայն՝ 2022 թ. օգոստոսի 3-ի լույս 4-ի գիշերը քնած ժամանակ հանկարծամահ է եղել ՀՀ ՊՆ N զորամասի եռամսյա վարժական հավաքի մասնակից, պահեստազորային շարքային Ատոմ Ռազմիկի Հարությունյանը (ծնվ. 1978թ.)*[63]*:*

[63] https://mil.am/hy/news/10908

ՊՆ խոսնակ Արամ Թորոսյանը Yerevan.Today-ի հետ զրույցում ասել է[64], որ եռամսյա վարժական հավաքների բոլոր մասնակիցները ըստ ընթացակարգի անցել են բուժզննություն, սակայն նշել է, որ չի կարող ասել արդյոք պահեստազորային Ատոմ Հարությունյանը զինկոմիսարիատին ներկայացրել է իր առողջական վիճակի կամ գանգատների մասին բժշկական փաստաթղթեր, թե ոչ, հավելելով, որ ընթանում է քննություն:

Ըստ Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալների՝ կազմվել է արձանագրություն քրեական վարույթ նախաձեռնելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշների:

### 3. Արշալույս Հովհաննիսյան

*ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության համաձայն՝ 2022 թ. օգոստոսի 7-ին հանկարծամահ է եղել N զորամասի պայմանագրային զինծառայող, շարքային Արշալույս Վռամի Հովհաննիսյանը (ծնվ. 1976 թ)[65]:*

Զինծառայողը Վարդենիս քաղաքից էր: Մասնակցել էր 44-օրյա պատերազմին, ստացել վիրավորում[66]:

Կազմակերպությանը պաշտոնական աղբյուրից հայտնած տվյալներով՝ մահվան դեպքի առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով:

Հատկանշական է, որ նախկինում հանկարծամահություն որակված Կազմակերպությանը հայտնի մահվան դեպքերում քրեական գործ էր հարուցվում 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ: Մինչդեռ այժմ նման դեպքերում քրեական վարույթ է նախաձեռնվում 2021 թ. ընդունված քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածով՝ «սպանություն»: Նման մոտեցումը, ըստ

---

64 https://yerevan.today/all/society/108994/pn-parzabanoumy%D5%9D-eramsya-havaqi-masnakci-mahvan-veraberyal
65 https://mil.am/hy/news/10914
66 https://factor.am/541678.html

պաշտոնական աղբյուրի բանավոր պարզաբանման, բացատրվում է այն հանգամանքով, որ հայտնի չեն դեպքի հանգամանքները: Նման բոլոր դեպքերում քրեական վարույթ է նախաձեռնվում սպանության հոդվածով, իսկ հետագայում քննությամբ ձեռք բերված տվյալների հիման վրա փոփոխվում է հոդվածը կամ գործի վարույթը կարճվում կամ կասեցվում է:

## 4. Մանվել Թաղևոսյան

*ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության համաձայն՝ 2022 թ. օգոստոսի 14-ին է ՀՀ ՊՆ զորամասերից մեկի պայմանագրային զինծառայող, շարքային Մանվել Մյասնիկի Թաղևոսյանի (ծնվ. 1981թ.) ինքնազգացողությունը կտրուկ վատթարացել, և չնայած ցուցաբերված բժշկական օգնությանը՝ զինծառայողի կյանքը փրկել չի հաջողվել[67]:*

Կազմակերպությանը պաշտոնական աղբյուրից հայտնած տվյալներով՝ մահվան դեպքի առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով:

Հատկանշական է, որ նախկինում հանկարծամահություն որակված Կազմակերպությանը հայտնի մահվան դեպքերում քրեական գործ էր հարուցվում ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ: Մինչդեռ այժմ նման դեպքերում քրեական վարույթ է նախաձեռնվում 2021 թ. ընդունված քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածով՝ «սպանություն»: Նման մոտեցումը, ըստ պաշտոնական աղբյուրի բանավոր պարզաբանման, բացատրվում է այն հանգամանքով, որ հայտնի չեն դեպքի հանգամանքները: Նման բոլոր դեպքերում քրեական վարույթ է նախաձեռնվում սպանության հոդվածով, իսկ հետագայում քննությամբ ձեռք բերված տվյալների հիման վրա փոփոխվում է հոդվածը կամ գործի վարույթը կարճվում կամ կասեցվում է:

**Առողջական խնդիրներ**
**Ծառայության հետ չկապված**

---

[67] https://mil.am/hy/news/10933?fbclid=IwAR0dFvT99zrNyiO5CPGBmCPu_IeabY3SQxqWrXKi3Xe5V_8woe1UGSwWn4w

5. **Կամո Կարապետյան**

*Սպա Կամո Կարապետյանի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:*

*Կազմակերպությանը դատախազությունից հայտնել են, որ սպան մահացել է ինֆարկտից՝ 2022 թ. հունվարի 4-ին՝ տանը:*

Զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից:

6. **Հովհաննես Հովհաննիսյան**

*Սպա Հովհաննես Հովհաննիսյանի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:*

*Կազմակերպությանը հայտնի է դարձել, որ սպան մահացել է 2022 թ. մարտի 25-ին «Էրեբունի» ԲԿ-ում բուժման մեջ գտնվելիս:*

Զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից:

7. **Սլավիկ Գրիգորյան**

*Պայմանագրային զինծառայող Սլավիկ Գրիգորյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությունից:*

*Կազմակերպությանը հայտնի է դարձել, որ տանը ինքնազգացողությունը վատանալու պատճառով Սլավիկ Գրիգորյանին տեղափոխել են Արցախի հանրապետական բժշկական կենտրոն, որտեղ 2022 թ. ապրիլի 30-ին վերջինս մահացել է սրտամկանի սուր ինֆարկտից:*

Զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացվել է Ստեփանակերտի ՔՈՎ (քրեական ոստիկանության վարչության) կողմից:

**8. Էդուարդ Գրիգորյան**

*Սպա Էդուարդ Գրիգորյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությունից: Կազմակերպությանը հայտնի է դարձել, որ 2022 թ. մայիսի 6-ին՝ սպային ինքնազգացողությունը տանը վատացել է: Վերջինիս տեղափոխել են Արցախի հանրապետական բժշկական կենտրոն, որտեղ նույն օրը Էդուարդ Գրիգորյանը մահացել է:*

Զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացվել է Ստեփանակերտի ՔՈՎ (քրեական ոստիկանության վարչության) կողմից:

**9. Գարիկ Վարդանյան**

*Պայմանագրային զինծառայող Գարիկ Վարդանյանը մահացել է 2022 թ. մայիսի 21-ին ինֆարկտից: Զինծառայողի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությունից:*

Կազմակերպությանը հայտնել են, որ պայմանագրային զինծառայող Գարիկ Վարդանյանի մահվան դեպքով զբաղվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության բազումի բաժնի կողմից:

**10. Ալիկ Գրիգորյան**

*Պայմանագրային զինծառայող Ալիկ Գրիգորյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությունից:*

Կազմակերպությանը հայտնել են, որ 2022 թ. հունիսի 22-ին պայմանագրային զինծառայողի ինքնազգացողությունը տանը վատացել է: Նա տեղափոխվել է Արցախի հանրապետական ԲԿ «Ստամոքսաաղիքային տրակտի պրոֆոզ արյունահոսություն,

հիպոքոլեմիկ շոկ, վիճակը ծայրահեղ ծանր» ախտորոշմամբ: Հաջորդ օրը՝ հունիսի 23-ին զինծառայողը մահացել է:

Կազմակերպությանը հայտնել են, որ պայմանագրային զինծառայող Ալիկ Գրիգորյանի մահվան դեպքով զբաղվել է ԱՀ ոստիկանությունը:

**11. Անյուտա Արզումանյան**

*Ավագ Ենթասպա Անյուտա Արզումանյանի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել:*

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել Դատախազությունից ստացված պատասխան գրությամբ: Կազմակերպությանը Դատախազությունից հայտնել են, որ Անյուտա Արզումանյանը մահացել է 2022 թ. հուլիսի 21-ին: Վերջինս 2022 թ. մայիսի 12-ից հտնվել է Հանրապետական հիվանդանոցում «քաղցկեղ» ախտորոշմամբ:

**12. Գառնիկ Խաչատրյան**

*Պայմանագրային զինծառայող Գառնիկ խաչատրյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:*

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել Դատախազության պատասխան գրությամբ:

Կազմակերպությանը մասնավորապես Դատախազությունից հայտնել են, որ պայմանագրային զինծառայողը 2022 թ. օգոստոսի 19-ին շտապօգնության մեքենայով անգիտակից վիճակում տեղափոխել են Գյումրու ԲԿ, որտեղ վերջինս մահացել է օգոստոսի 22-ին: Ախտորոշվել է «ուղեղի արյան շրջանառության սուր խանգարում, իշեմիկ տիպի ինսուլտ»:

Դատախազությունից հայտնել են, որ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 10-րդ կայազորային քննչական բաժնում կազմվել է արձանագրություն քրեական վարույթ նախաձեռնելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

**13. Սարգիս Վարդանյան**

*Սպա Սարգիս Վարդանյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:*

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել Դատախազության պատասխան գրությամբ։

Դատախազությունից մասնավորապես հայտնել են, որ 2022 թ. հոկտեմբերի 15-ին Սարգիս Վարդանյանը՝ հանգստի մեջ գտնվելով, Երևան քաղաքի Աբովյան փողոցի «ՍԱՍ» սուպերմարկետի ավտոկայանատեղիում կայանած իր անձնական օգտագործման «ՕՊԵԼ» մակնիշի ավտոմեքենայում հանկարծամահ է եղել։ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների 2-րդ քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ։

**14. Արմենակ Վարդանյան**

*Սպա Արմենակ Վարդանյանի մահվան մասին պաշտոնական տեղեկատվություն չի տարածվել։*

Կազմակերպությունը դեպքի մասին տեղեկացել է Դատախազության պատասխան գրությամբ։

Դատախազությունից մասնավորապես հայտնել են, որ 2022 թ. հոկտեմբերի 16-ին, Արմենակ Վարդանյանը Չարենցավանում գտնվող իր տանը հանկարծամահ է եղել։

ՀՀ Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի Քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ։

**15. Ալիկ Միրզոյան**

*Սպա Ալիկ Միրզոյանի մահվան մասին պաշտոնական տեղեկատվություն չի տարածվել։*

Կազմակերպությունը դեպքի մասին տեղեկացել է Դատախազության պատասխան գրությամբ։

Դատախազությունից մասնավորապես հայտնել են, որ 2022 թ. նոյեմբերի 9-ին Միրզոյանը մահացել է քաղցկեղից՝ գտնվելով տանը։

**16. Աղավնի Խաչատրյան**

*Սպա Աղավնի Խաչատրյանի մահվան մասին պաշտոնական տեղեկատվություն չի տարածվել:*

Կազմակերպությունը դեպքի մասին տեղեկացել է Դատախազության պատասխան գրությամբ:

Դատախազությունից մասնավորապես հայտնել են, որ սպա Ա. Խաչատրյանը մահացել է 2022 թ. նոյեմբերի 18-ին մոտ «Ուռուցքաբանության ազգային կենտրոն»-ում՝ «Հաստ աղու քաղցկեղ» ախտորոշմամբ:

**17. Ապրես Ապրեսյան**

*Ենթասպա Ապրես Ապրեսյանի մահվան մասին պաշտոնական տեղեկատվություն չի տարածվել:*

Կազմակերպությունը դեպքի մասին տեղեկացել է Դատախազության պատասխան գրությամբ:

Դատախազությունից մասնավորապես հայտնել են, որ դեկտեմբերի 14-ից «ՄՇԱ, 2-րդ, 3-րդ աստիճանի գլխուղեղի մուլտիֆոկալ նորագոյացություն՝ 2-րդ կիսագնդի շրջանում» ախտորոշմամբ «Արմենիա» ԲԿ-ում բուժման մեջ գտնվող Ապրես Ապրեսյանը մահացել է 2022 թ. դեկտեմբերի 16-ին:

**Ե. Ավտովթար**

**Ծառայության հետ կապված**

1. **Քրիստինե Չիչյան**

*ՀՀ պաշտպանության նախարարության տարածած տեղեկության համաձայն 2022 թ. հուլիսի 15-ին ՀՀ ՊՆ զորամասերից մեկում տեղի ունեցած ղժբախտ պատահարի հետևանքով վնասվածքներ է ստացել և հիվանդանոց տեղափոխվել բուժկետի պետ-բուժակ,*

*պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ ենթասպա Քրիստինե Միխայելի Չիչյանը (ծնվ. 1985թ.)։ Հուլիսի 16-ին Քրիստինե Չիչյանը մահացել է*[68]*։*

Կազմակերպությանը պաշտոնական աղբյուրից հայտնած տվյալներով՝ հուլիսի 15-ին ժամկետային զինծառայող Ռոբերտ Քարամյանը իրեն ամրակցված «Ուազ 43-20» մակնիշի ավտոմեքենայով զորամասի տարածքից դեպի մարտական դիրքեր երթ կատարելու ժամանակ զորամասի տարածքում պատահաբար վրաերթի է ենթարկել նույն զորամասի բուժկետի պետ-բուժակ, պայմանագրային զինծառայող Քրիստինե Չիչյանին։

Մահվան փաստի կապակցությամբ քրեական վարույթը նախաձեռնվել է ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի1-ին կետով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն առաջացրել է մարդու մահ։ Ըստ աղբյուրի՝ քրեական վարույթ նախաձեռնելու պահին Քրիստինե Չիչյանը մահացած չի եղել։

**2. Գրիգոր Գրիգորյան**

*ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ 2022 թ. նոյեմբերի 16-ին՝ ժամը 09:50-ի սահմաններում, ՀՀ ՊՆ «Կամազ» մակնիշի ավտոմեքենայի կողաշրջման հետևանքով մահացել է զինծառայող Գրիգոր Արթուրի Գրիգորյանը (ծնված՝2000թ.)*[69]*։*

Դատախազությունից ստացված պատասխան գրության համաձայն՝ Գրիգոր Գրիգորյանը դեպքի պահին հանդիսավել է վարժական հավաքների շրջանակներում զորակոչված զինծառայող։

Կազմվել է արձանագրություն քրեական վարույթ նախաձեռնելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով։

Նախաքննությունը շարունակվում է։

**Ծառայության հետ չկապված**

**3. Վահագն Շառյան**

---

[68] https://mil.am/hy/news/10861
[69] https://mil.am/hy/news/11170

*Պայմանագրային զինծառայող Վահագն Շառյանի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:*

*Կազմակերպությանը Դատախազությունից հայտնել են, որ պայմանագրային զինծառայողը մահացել է ավտովթարի հետևանքով՝ 2022 թ. հունվարի 26-ին, երբ վերջինս որպես ուղևոր գտնվել է այլ անձի վարած ավտոմեքենայում: Դեպքը տեղի է ունեցել Տավուշի մարզի Այգեպար-Մովսես ավտոճանապարհին՝ դուրս գալով երթևեկելի մասից գլորվել է ձորը: Վահագն Շառյանը մահացել է Բերդի ԲԿ տեղափոխվելու ճանապարհին:*

Զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Տավուշի քննչական բաժնի կողմից:

**4. Արեգ Նովոսարտյան**

*Պայմանագրային զինծառայող Արեգ Նովոսարտյանի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:*

*Կազմակերպությանը դատախազությունից հայտնել են, որ պայմանագրային զինծառայողը մահացել է ավտովթարի հետևանքով՝ 2022 թ. փետրվարի 7-ին գտնվելով ազատ հերթափոխում՝ այլ անձի վարած մեքենայում: Դեպքը տեղի է ունեցել Բագրատաշեն-Հաղթանակ ավտոճանապարհին, երբ մեքենան դուրս գալով երթևեկելի գոտուց՝ բախվել է այլ մեքենայի: Արեգ Նովոսարտյանը տեղում մահացել է:*

Զինծառայողի մահվան փաստով հարուցվել է քրեական օրենսգրքի 242-րդ 2-րդ մասով:

Հարուցված քրեական գործի վարույթն ուղարկվել է դատարան: Դատաքննությունը շարունակվում է:

**5. Անդրանիկ Ասատրյան**

*Սպա Անդրանիկ Ասատրյանի մահացել է 2022 թ. ապրիլի 23-ին ավտովթարի հետևանքով:*

Սպայի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել պաշտոնական աղբյուրից ստացված գրության պատասխանից:

Հայտնի է, որ մահվան դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Կատարվում է նախաքննություն:

**6. Գարեգին Եփրեմյան**

*Սպա Գարեգին Եփրեմյանի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությունից:*

Կազմակերպությանը հայտնել են, որ Գարեգին Եփրեմյանը մահացել է մայիսի 21-ին: Վերջինս 2022 թ. մայիսի 8-ին Արարատի մարզի Լանջանիստ գյուղի վարչական տարածքում ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով մարմնական վնասվածքներ է ստացել և «Պոլիտրավմա, վիճակը ծանր» ախտորոշմամբ ընդունվել է Էրեբունի ԲԿ:

ՀՀ դատախազությունից Կազմակերպությանը հայտնել են, որ Գարեգին Եփրեմյանի մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի կողմից:

**7. Էրզիկ Ազիզյան**

*Ենթասպա Էրզիկ Ազիզյանի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությունից:*

Կազմակերպությանը դատախազությունից հայտնել են, որ մայիսի 14-ին ենթասպա Էրզիկ Ազիզյանը որպես ուղևոր գտնվել է այլ անձի վարած մեքենայում, որը Արագածոտնի մարզի Ծաղկեվանք գյուղի ճանապարհին դուրս է եկել երթևեկելի գոտուց, բախվել քարին և հայտվել ձորում, ինչի հետևանքով ենթասպան մահացել է:

ՀՀ դատախազթյնուից Կազմակերպությանը հայտնել են, որ Էրզիկ Ազիզյանի մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության կողմից:

**8. Կարեն Մարտիրոսյան**

*shamshyan.com-ի[70] տվյալներով՝ 2022 թ. հունիսի 20-ին Արարատի մարզի բնակիչ, պայմանագրային զինծառայող Կարեն Մ.-ն իր վարած ВАЗ 2109 մակնիշի ավտոմեքենայով Երևան-Երասխ ավտոճանապարհի Շահումյան գյուղի կամրջի վրա դուրս է եկել երթևեկելի գոտուց և ընկել դատարկ ջրատարի մեջ:*

Վթարի հետևանքով Կարեն Մարտիրոսյանը տեղում մահացել է, իսկ մեքենայում գտնվող նրա կինն ու 2 անչափահաս երեխաները տեղափոխվել են «Արտաշատ» բժշկական կենտրոն:

ՀՀ դատախազությունից Կազմակերպությանը հայտնել են, որ զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության կողմից:

**9. Նիկոլայ Սարգսյան**

*ԱՀ/ ԼՂ պաշտպանության նախարարության տարածած[71] հաղորդագրության համաձայն՝ 2022 թ. հունիսի 24-ին՝ օրվա ծառայության ավարտից հետո, հանգստի ժամին, քաղաքացիական ավտոմեքենայով վթարի են ենթարկվել ՊԲ N զորամասի պայմանագրային զինծառայողներ: Ստացած վնասվածքներից Նիկոլայ Սերյոժայի Սարգսյանը (ծնված 1981թ.) մահացել է, ևս չորս զինծառայող տեղափոխվել է բժշկական հաստատություն:*

Նույն օրը լրատվամիջոցներով տարածվեց տեղեկություն այն մասին, որ ավտովթար է տեղի ունեցել Սյունիքի մարզում՝ Երևան-Մեղրի ավտոճանապարհի Ծղուկ գյուղի վարչական տարածքում: Ըստ աղբյուրի՝ բախվել են «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա և ՀՀ ՊՆ համարանիշներով «Կամազ»-ը: Արդյունքում մեկ հոգի մահացել է, ևս չորս հոգի, այդ թվում՝ զինծառայողներ, տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Սիսիանի զինվորական հոսպիտալ[72]:

---

[70] https://shamshyan.com/hy/article/2022/06/20/1216120/
[71] http://www.nkrmil.am/news/view/3321
[72] https://shamshyan.com/hy/article/2022/06/24/1216436/

Դեպքի մասին ՀՀ գլխավոր դատախազությունից Կազմակերպությանը տեղեկացրել են, որ նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Կատարվում է նախաքննություն:

**10. Կարեն Մեսրոպյան**

*Պայմանագրային զինծառայող Կարեն Մեսրոպյանի մահվան մասին պաշտոնական հաղորդագրույւն չի տարածվել:*

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել Դատախազության պատասխան գրությամբ:

Կազմակերպությանը Դատախազությունից տեղեկացրել են, որ զինծառայողը մահացել է 2022 թ. հուլիսի 9-ին իր կողմից վարած մեքենայով Ճարտար-Սոս ավտոճանապարհի 3-րդ կմ հատվածում ճանապարհի երթևեկի գոտուց դուրս գալու գալով ծառին բախվելու հետևանքով:

**11. Սուրեն Փիրումյան**

**12. Ռազմիկ Հակոբյան**

*Shamshyan.com-ի[73] տվյալներով 2022 թ. օգոստոսի 21-ին ժամը 01:30-ի սահմաններում Արարատի մարզի բնակիչ, 29-ամյա Ֆահրադ Հակոբյանը իր վարած Opel Astra մակնիշի ավտոմեքենայով Կապան քաղաքում դուրս է եկել հանդիպակած երթևեկելի գոտի, բախվել բետոնե պատնեշին ու ծառին: Վթարի հետևանքով Ֆ. Հակոբյանն ու ուղևոր՝ Արարատի մարզի բնակիչ, 37-ամյա պայմանագրային զինծառայող Սուրեն Փիրումյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Կապան» բժշկական կենտրոն, իսկ մյուս ուղևորը՝ Արարատի մարզի բնակիչ, 28-ամյա պայմանագրային զինծառայող Ռազմիկ Հակոբյանը տեղում մահացել է: Օգոստոսի 22-ի առավոտյան՝ ժամը 07:40-ին Սուրեն Փիրումյանը «Կապան» բժշկական կենտրոնում գիտակցության չգալով, մահացել է:*

Դեպքի մասին պաշտոնական հողաղորդագրություն չի տարածվել:

---

[73] https://www.aravot.am/2022/08/22/1286540/

Դատախազության կողմից Կազմակերպությանը հայտնել են, որ արձանագրություն է կազմվել ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

**13. Պավլիկ Բրուտյան**

*Պայմանագրային զինծառայող Պավլիկ Բրուտյանի մահվան մասին տեղեկություն չի տարածվել:*

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել Պաշտոնական աղբյուրից ստացված գրությամբ:

Պավլիկ Բրուտյանը մահացել է 2022 թ. սեպտեմբերի 2-ին, երբ վերջինս իր վարած մեքենայով Ճամբարակ-Դրախտիկ ավտոճանապարհի 10-րդ կմ հատվածում դուրս է եկել երթևեկելի մասից, բախվել մետաղե արգելապատնեշին և ընկել ձորը:

Մահվան փաստի կապակցությամբ քրեական վարույթը նախաձեռնվել է ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

**14. Գրիգորի Սարգսյան**

*Պայմանագրային զինծառայող Գրիգորի Սարգսյանի մահվան մասին տեղեկություն չի տարածվել:*

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել Պաշտոնական աղբյուրից ստացված գրությամբ:

2022 թ. հոկտեմբերի 25-ին ԱՀ Մարտունի-Բերդաշեն ավտոճանապարհի 10-րդ կմ հատվածում Գ. Սարգսյանը իր կողմից վարած «ՕՊԵԼ» մակնիշի ավտոմեքենայով դուրս է եկել ճանապարհի երթևեկել հատվածից դեպի ձախ և բախվելով հողաթմբին կողաշրջվել է, վերջինիս հետևանքով տեղում մահացել է: Վարույթն իրականացրել է ԱՀ Մարտունու քննչական բաժինը:

**15. Հովսեփ Մուրադխանյան**

**16. Սերգեյ Ժամհարյան**

**17. Սարգիս Ժամհարյան**

*Պայմանագրային զինծառայողների մահվան դեպքի մասին պաշտոնական տեղեկատվություն չի տարածվել:*

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատարազությանն ուղղված գրության պատասխանից:

2022 թ. նոյեմբերի 26-ին, ժամը 01:30-ի սահմաններում Սևան-Մարտունի-Գետափ 58-րդ կմ հատվածում՝ Լիճք գյուղի վարչական տարածքում, միմյանց են բախվել պայմանագրային զինծառայող Հ. Մուրադխանյանի կողմից վարած «VOLKSWAGEN» մակնիշի և քաղաքացի Վ. Դ.-ի կողմից վարած «BMW» մակնիշի ավտոմեքենաները, ինչի հետևանքով վերջինիս ուղևորներից մեկը ինչպես նաև Հ. Մուրադխանյանը ու նրա ուղևորները, եղբայրներ, պայմանագրային զինծառայողներ Սերգեյ և Սարգիս Ժամհարյանները տեղում մահացել են:

ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության փաստով ՀՀ ՔԿ Մարտունու քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

**Զ. Զենքի, ռազմամթերքի, վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով**

**Զինվորական ծառայության հետ կապված**

**1. Պայյան Պողոսյան**

*2022 թ. հուլիսի 25-ին ՀՀ ՊՆ կողմից տարածվեց տեղեկություն այն մասին, որ հուլիսի 17-ին ջերմային 2-րդ աստիճանի այրվածքով Զանգեզուրի կայազորային հոսպիտալ է ընդունվել ՀՀ ՊՆ զորամասերից մեկի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Պայյան Զիվանի Պողոսյանը: Զինծառայողը նույն օրը ռեանիմոբիլով տեղափոխվել է Այրվածքաբանության ազգային կենտրոն[74]: Հաղորդագրության մեջ ՀՀ ՊՆ-ն նաև հայտնեց,*

[74] https://mil.am/hy/news/10879

*որ զինծառայողի առողջական վիճակում դիտարկվել է վատթարացում և այն գնահատվում է ծայրահեղ ծանր: Հուլիսի 26-ին Պաշտպանության նախարարությունը տեղեկություն տարածեց, որ զինծառայողը մահացել է[75]:*

Հատկանշական է, որ զինծառայողի այրվածք ստանալու դեպքի մասին պաշտոնական հաղորդագրությունը տարածվեց դեպքից ավելի քան մեկ շաբաթ անց և միայն զինծառայողի վիճակը վատթարանալուց հետո, երբ նա գտնվում էր ծայրահեղ ծանր վիճակում։

Պալյան Պողոսյանը Շիրակի մարզի Ազատան գյուղից էր։ Ախուրյանի խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Իկիլիկյանն aravot.am-ի հետ զրույցում ասաց[76], որ իրեն հասած ոչ պաշտոնական տվյալներով զինծառայողը Սիսիանի զորամասում էր ծառայում։ Դեպքի պահին Պալյան Պողոսյանը չորս ծառայակիցների հետ գտնվել է «բլինդաժում», որը ծովի մակերևույթից 1700 մետր բարձրության վրա է։ Քանի որ Սիսիանում միշտ ցուրտ է, զինծառայողները ամբողջ տարին վառարանով են տաքանում։ Զինծառայողները դեպքի պահին քարածուխ են օգտագործել փայտի փոխարեն, որովհետև փայտ չկա։ Վառարանի մեջ ածուխը տրաքել է, և բոցն ընկել է սինթետիկ քնապարկերի վրա, որոնք այրվել են։ Զինծառայողները փորձել են մարել կրակը և այդ ընթացքում բոցը դիպել է Պալյան Պողոսյանի դեմքին, հալված սինթետիկ հատվածը լցվել է վրան։ Բոլոր զինծառայողները այրվածքներ ստացել են, սակայն ամենածանրը Պալյանի վիճակն է եղել։

Դեպքից վեց ամիս անց՝ զինծառայողի մայրը «Aravot.am»-ի լրագրողի հետ զրույցում հայտնեց, որ դեռևս տեղյակ չեն մահվան հանգեցրած հրդեհի հանգամանքներից, սպասում են փորձաքննության պատասխանին։

### Է. Ականի պայթյուն

1. **Սարիբեկ Եղոյան**

*Ըստ ՊՆ տարածած հաղորդագրության սպա Սարիբեկ Եղոյանը հոկտեմբերի 12-ին զոհվել է ականապայթյունային վիրավորման հետևանքով:*

ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթը կարճվել է։

[75] https://mil.am/hy/news/10887
[76] https://www.aravot.am/2022/07/27/1282436/

**Ը. Դժբախտ պատահար**

**Զինվորական ծառայության հետ չկապված**

**Հոսանքահարում**

1. **Վաչիկ Ապերյան**

*Սպա Վաչիկ Ապերյանի մահվան վերաբերյալ պաշտոնական տեղեկություն չի տարածվել: Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ԶԼՄ հրապարակումներից*[77]*, որը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանով:*

*Կազմակերպությանը դատախազությունից հայտնել են, որ սպան մահացել է 2022 թ. փետրվարի 26-ին տանը՝ կենցաղային աշխատանքներ կատարելու ժամանակ հոսանքահարվելու հետևանքով:*

Զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Բերդի քննչական բաժնի կողմից։

**Ջրահեղձ**

1. **Ազատ Մանուկյան**

*2022 թ. օգոստոսի 7-ին Սևանա լճում լողանալիս ջրահեղձ է եղել եռամսյա հավաքի մասնակից 31-ամյա Ազատ Մանուկյանը:*

Ըստ Գ. Շամշյանի տեղեկությունների՝ Ազատ Մանուկյանը մի քանի ընկերների հետ նավակով մտել են լիճ և հայտնելով, որ ցանկանում է լողալ՝ նետվել է ջուրը ու ջրահեղձ եղել: Ա. Մանուկյանի մարմինը հայտնաբերվել է օգոստոսի 14-ին։

Փաստի առթիվ կազմվել է արձանագրություն քրեական վարույթ նախաձեռնելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով։ ով

[77] https://shamshyan.com/hy/article/2022/02/27/1207873/

Հայաստանի քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի կայազորի քննչական վարչությունում վարույթ է նախաձեռնվել:

*Աղյուսակ 1-ում ներկայացվում է 2022 թ. զինված ուժերում  մահացության դեպքերի ամփոփ տեղեկությունը:*

Աղյուսակ 1. 2022 թ. մահացության դեպքերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ[78]

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Դեպքի ամսաթիվը | Դեպքի տարածաշրջան | Տեղ. տարածման առաջնային աղբյուրը | Քր. գործ հարուցող մարմինը | ՀՀ քր. օրենսգրքի հոդվածը | Քր. գործի պաշտոնական որակումը | Դեպքի պատճառը | Որ փուլում է գտնվում գործը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կամո Կարապետյան | 4 հունվարի, 22 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից | Առողջական խնդիրներ | Հայտնի չէ |
| 2. | Հովսափ Պողոսյան | 7 հունվարի, 22 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | 1-ին կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մաս | Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ | Առողջական խնդիրներ | Նախաքննություն |
| 3. | Արթուր Մխիթարյան | 11 հունվարի, 22 | ՀՀ | ՀՀ ՊՆ | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր | Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից երկու կամ ավելի անձանց սպանությունը, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կատարման հետ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով | Հրադադարի ռեժիմի խախտում | Նախաքննություն |
| 4. | Ռուդիկ Ղարիբյան | 11 հունվարի, 22 | ՀՀ | ՀՀ ՊՆ | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր | Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից երկու կամ ավելի անձանց սպանությունը, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կատարման հետ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով | Հրադադարի ռեժիմի խախտում | Նախաքննություն |

[78] Նշում. ՀՀ քննչական կոմիտեից Կազմակերպությանը տրամադրած տեղեկության համաձայն՝ օգոստոսին հանկարծամահ եղած զինծառայողներից մեկի գործը կարճվել է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայության հաստատման հիմքով: Այնուամենայնիվ կառույցը չի հայտնել, թե օգոստոսին հանկարծամահ եղած երեք զինծառայողներից ում գործն է կարճվել:

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5. | Վահան Բաբայան | 11 հունվարի, 22 | ՀՀ | ՀՀ ՊՆ | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր | Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից երկու կամ ավելի անձանց սպանությունը, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կատարման հետ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով | Հրադադարի ռեժիմի խախտում | Նախաքննություն |
| 6. | Վահագն Շառյան | 26 հունվարի, 22 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Տավուշի քննչական բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Տավուշի քննչական բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Տավուշի քննչական բաժնի կողմից | Ավտովթար/ ուղևոր | Հայտնի չէ |
| 7. | Արեգ Նովոսարտյան | 7 փետրվարի, 22 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | 6-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մաս | Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ | Ավտովթար/ ուղևոր | Դատաքննություն |
| 8. | Վաչիկ Ապերյան | 26 փետրվարի, 22 | ՀՀ | ԶԼՄ | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Բերդի քննչական բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Բերդի քննչական բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Բերդի քննչական բաժնի կողմից | Դժբախտ պատահար/ հոսաքահարում | Հայտնի չէ |
| 9. | Հրաչ Մանասարյան | 07 մարտի, 22 | ՀՀ | ՀՀ ՊՆ | 8-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 13-րդ կետեր | Երկու կամ ավելի անձանց սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ | Հրադադարի ռեժիմի խախտում | Նախաքննություն |
| 10. | Ալբերտ Միրոյան | 16 մարտի, 22 | ՀՀ | ՀՀ ՊՆ | 9-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ | Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում | Ինքնասպանություն | Նախաքննություն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11. | Էդուարդ Ռուստամյան | 17 մարտի , 22 | ՀՀ | ՀՀ ՊՆ | 9-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 1-ին մաս | Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից | Ինքնասպան ություն | Նախաքննու թյուն |
| 12. | Դավիթ Միրզոյան | 25 մարտի , 22 | ԱՀ/ԼՂ | ԱՀ/ԼՂ ՊՆ | 1-ին կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին 7-րդ, 13-րդ կետեր, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետեր | Երկու կամ ավելի անձանց սպանություն մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից ազգային՝ ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով | Հրադադարի ռեժիմի խախտում | Նախաքննու թյուն |
| 13. | Իշխան Օհանյան | 25 մարտի , 22 | ԱՀ/ԼՂ | ԱՀ/ԼՂ ՊՆ | 1-ին կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին 7-րդ, 13-րդ կետեր, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետեր | Երկու կամ ավելի անձանց սպանություն մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից ազգային՝ ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով | Հրադադարի ռեժիմի խախտում | Նախաքննու թյուն |
| 14. | Արարատ Թևոսյան | 25 մարտի , 22 | ԱՀ/ԼՂ | ԱՀ/ԼՂ ՊՆ | 1-ին կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին 7-րդ, 13-րդ կետեր, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետեր | Երկու կամ ավելի անձանց սպանություն մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից ազգային՝ ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով | Հրադադարի ռեժիմի խախտում | Նախաքննու թյուն |
| 15. | Հովհաննես Հովհաննիսյա ն | 25 մարտի , 22 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | Հայտնի չէ | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից | Առողջական խնդիրներ | Հայտնի չէ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Էրեբունու բաժնի կողմից | | | |
| 16. | Անդրանիկ Ասատրյան | 23 ապրիլի, 22 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | 8-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մաս | Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ | Ավտովթար/ ուղևոր | Նախաքննություն |
| 17. | Սամվել Սանոյան/ Սանեյան | 28 ապրիլի, 22 | ՀՀ | ՀՀ ՊՆ | 9-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս | Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ | Սպանություն/ԶՕԿ | Նախաքննություն |
| 18. | Սլավիկ Գրիգորյան | 30 ապրիլի, 2022 | ԱՀ/ԼՂ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ԱՀ քրեական ոստիկանության վարչության կողմից | Վարույթն իրականացվել է ԱՀ ՔՌՎ կողմից | Վարույթն իրականացվել է ԱՀ ՔՌՎ կողմից | Առողջական | Հայտնի չէ |
| 19. | Էդուարդ Գրիգորյան | 6 մայիսի, 2022 | ԱՀ/ԼՂ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ԱՀ քրեական ոստիկանության վարչության կողմից | Վարույթն իրականացվել է ԱՀ ՔՌՎ կողմից | Վարույթն իրականացվել է ԱՀ ՔՌՎ կողմից | Առողջական | Հայտնի չէ |
| 20. | Գարեգին Եփրեմյան | 8 մայիսի, 2022 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի կողմից | Ավտովթար/ քաղաքացիական մեքենա | Հայտնի չէ |
| 21. | Արգիշտի Եղյան | 11 մայիսի, 22 | ՀՀ | ՀՀ ՊՆ | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ | Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում | Ինքնասպանություն | Նախաքննություն |
| 22. | Էրզիկ Ազիզյան | 14 մայիսի, 2022 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ Արագածոտնի | Վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ Արագածոտնի | Վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության կողմից | Ավտովթար/ քաղաքացի | Հայտնի չէ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մարզային քննչական վարչության կողմից | մարզային քննչական վարչության կողմից | | ական մեքենա | |
| 23. | Գարիկ Վարդանյան | 21.Մյս. 22 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից | Առողջական | Հայտնի չէ |
| 24. | Դավիթ Վարդանյան | 29 մայիսի , 22 | ՀՀ | ՀՀ ՊՆ | 7-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետ | Սպանությունը՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով | Հրադադարի ռեժիմի խախտում | Նախաքննություն |
| 25. | Սարգիս Գրիգորյան | 9 հունիսի, 2022 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնի կողմից | Ինքնասպանություն | Հայտնի չէ |
| 26. | Հրաչ Փիլիպոսյան | 19 հունիսի 2022 | ՀՀ | ԶԼՄ, հաստատվել է ՀՀ ՊՆ և դատախազությայ կողմից | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր | Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը՝ ռազմական դրության, պատերազմի ժամանակ, մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝ | Սպանություն/ Մարտական ծառ. կան. խախտում | Նախաքննություն |
| 27. | Հմայակ Միքայելյան | 19 հունիսի, 2022 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննական վարչության կողմից | Սպանություն | Հայտնի չէ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28. | Կարեն մարտիրոսյան | 20 հունիսի 2022 | ՀՀ | ԶԼՄ | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արարտի մարզի քննչական վարչության կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արարտի մարզի քննչական վարչության կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արարտի մարզի քննչական վարչության կողմից | Ավտովթար/ քաղաքացիական մեքենայով | Հայտնի չէ |
| 29. | Ալիկ Գրիգորյան | 23 հունիսի, 2022 | ԱՀ/ԼՂ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իարկանացվել է ՀՀ քստիկանության կողմից | Վարույթն իարկանացվել է ՀՀ քստիկանության կողմից | Վարույթն իարկանացվել է ՀՀ քստիկանության կողմից | Առողջական | Հայտնի չէ |
| 30. | Նիկոլայ Սարգսյան | 24 հունիսի 2022 | ՀՀ | Պաշտոնական | 8-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մաս | Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ | Ավտովթար/ ուղևոր | Նախաքննություն |
| 31. | Կարեն Մեսրոպյան | 9 հուլիսի, 2022 | ԱՀ/ԼՂ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ԱՀ Մարտունու քննչական բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ԱՀ Մարտունու քննչական բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ԱՀ Մարտունու քննչական բաժնի կողմից | Ավտովթար/ քաղաքացիական մեքենա | Հայտնի չէ |
| 32. | Արսեն Մանուկյան | 14 հուլիսի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 8-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ | Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում | Ինքնասպանություն | Նախաքննություն |
| 33. | Քրիստինե Չիչյան | 16 հուլիսի, 2022 | ՀՀ | Ոչ պաշտոնական, հաստատվել է պաշտոնական | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ | Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն առաջացրել է մարդու մահ | Ավտովթար | Նախաքննություն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մարմինների կողմից | | | | | |
| 34. | Անյուտա Արզումանյան | 21 հուլիսի, 2022 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | Վարույթն իրականացվել է ՀՀ ոսիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոսիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի կողմից | Վարույթն իրականացվել է ՀՀ ոսիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի կողմից | Առողջական | Հայտնի չէ |
| 35. | Պայլյան Պողոսյան | 26 հուլիսի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | Հայտնի չէ | ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 1-ին մասով | Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, ռադիոակտիվ նյութի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութի, սարքի կամ առարկայի հետ վարվելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում | Զենքի, ռազմամթերքի հետ վարվելու կանոնների խախտում/ այրվածք հրդեհի հետրանքով | Նախաքննություն |
| 36. | Գուրգեն Գաբրիելյան | 03 օգոստոսի, 2022 | ԱՀ/ԼՂ | Պաշտոնական | 2-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 15-րդ կետեր | Սպանություն՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով | Հրադադարի ռեժիմի խախտում/ իրավիճակի սրում | Նախաքննություն |
| 37. | Արթուր Խաչատրյան | 03 օգոստոսի,2022 | ԱՀ/ԼՂ | Պաշտոնական | 2-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 15-րդ կետեր | Սպանություն՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով | Հրադադարի ռեժիմի խախտում/ իրավիճակի սրում | Նախաքննություն |
| 38. | Ատոմ Հարությունյան | 04 օգոստոսի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մաս | Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը է | Առողջական / հանկարծամահ վարժական | Նախաքննություն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում | հավաքների ժամանակ | |
| 39. | Արշալույս Հովհաննիսյան | 07 օգոստոսի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 8-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մաս | Սպանությունը՝ դիտավորյալ | Առողջական / հանկարծամահ | Նախաքննություն |
| 40. | Ազատ Մանուկյան | 07 օգոստոսի, 2022 | ՀՀ | Ոչ պաշտոնական | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մաս | Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում | Դժբախտ պատահար/ ջրահեղձ | Նախաքննություն |
| 41. | Էրիկ Ղարսյան | 9 օգոստոսի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 6-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 1-ին մաս | Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից | Ինքնասպանություն | Նախաքննություն |
| 42. | Մանվել Թաղևոսյան | 14 օգոստոսի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 8-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մաս | Սպանությունը՝ դիտավորյալ | Առողջական / հանկարծամահ | Նախաքննություն |
| 43. | Սուրեն Փիրումյան | 21 օգոստոսի, 2022 | ՀՀ | Ոչ պաշտոնական | 9-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մաս | Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ | Ավտովթար/ քաղաքացիական մեքենա | Նախաքննություն |
| 44. | Ռազմիկ Հակոբյան | 21 օգոստոսի | ՀՀ | Ոչ պաշտոնական | 9-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մաս | Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային | Ավտովթար/ քաղաքացի | Նախաքննություն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ոսի, 2022 | | | | | երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ | ական մեքենա | |
| 45. | Գառնիկ Խաչատրյան | 21 օգոստ ոսի, 2022 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | 10-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մաս | Բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ | Առողջական | Նախաքննություն |
| 46. | Պավլիկ Բրուտյան | 2 սեպտեմբերի, 2022 | ՀՀ | Տեղեկություն չի տարածվել | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մաս | Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ | Ավտոմեքենա/ քաղաքացիական մեքենա | Նախաքննություն |
| 47. | Արման Սարգսյան | 6 սեպտեմբերի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 15-րդ կետեր | Սպանություն՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով՝ կապված անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ պարտքի կատարման հետ | Հրադադարի ռեժիմի խախտում | Նախաքննություն |
| 48. | Նահապետ Մարգարյան | 28 սեպտեմբերի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 8-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 15-րդ կետեր | Սպանություն՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով՝ կապված անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ պարտքի կատարման հետ | Հրադադարի ռեժիմի խախտում/ իրավիճակի սրում | Նախաքննություն |
| 49. | Հովհաննես Սուքիասյան | 28 սեպտեմբերի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 8-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 15-րդ կետեր | Սպանություն՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով այլ անձանց | Հրադադարի ռեժիմի խախտում/ իրավիճակի սրում | Նախաքննություն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կյանքի համար վտանգավոր եղանակով՝ կապված անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ պարտքի կատարման հետ | | |
| 50. | Էդվարդ Հովհաննիսյան | 28 սեպտեմբերի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 8-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 15-րդ կետեր | Սպանություն՝ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով՝ կապված անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ պարտքի կատարման հետ | Հրադադարի ռեժիմի խախտում/ իրավիճակի սրում | Նախաքննություն |
| 51. | Հրայյա Քարամյան | 30 սեպտեմբերի, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 5-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 6-րդ մաս | Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը՝ ռազմական դրության, պատերազմի ժամանակ, մարտի պարագաներում, կամ որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ։ | Սպանություն/ Մարտական ծառ. կան. խախտում | Նախաքննություն |
| 52. | Սարիբեկ Եղոյան | 12 հոկտեմբեր, 2022 | ՀՀ | Պաշտոնական | Հայտնի չէ | ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մաս, հետագայում կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ 1-ին մասի 1-ին կետով | Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ | Ականի պայթյուն | Կարճվել է |
| **53.** | Սարգիս Վարդանյան | 15 հոկտեմբեր, 2022 | ՀՀ | Տեղեկատվություն չի տարածվել | ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների 2-րդ քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մաս | Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը | Առողջական | Նախաքննություն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 54. | Արմենակ Վարդանյան | 16 հոկտեմբեր, 2022 | ՀՀ | Տեղեկատվություն չի տարծվել | ՀՀ Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի Քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մաս | Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը | Առողջական | Նախաքննություն |
| 55. | Գրիգորի Սարգսյան | 25 հոկտեմբեր, 2022 | ԱՀ/ԼՂ | Տեղեկատվություն չի տարածվել | ԱՀ Մարտունու Քննչական բաժին | | Հայտնի չէ | Ավտովթար | Հայտնի չէ |
| 56. | Միսակ Պետրոսյան | 29 հոկտեմբեր, 2022 | ՀՀ | Պաշտոնական | 9-րդ կայազորային քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մաս, 528-րդ հոդվածի 1-ին մաս | Սպանություն/ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը | Սպանություն | Հայտնի չէ |
| 57. | Ալիկ Միրզոյան | 09 նոյեմբեր, 2022 | ՀՀ | Տեղեկատվություն չի տարածվել | Տվյալներ հայտնի չեն | Հայտնի չէ | Տվյալներ հայտնի չեն | Առողջական | Հայտնի չէ |
| 58. | Վահե Հովսեփյան | 15 նոյեմբեր, 2022 | ՀՀ | Պաշտոնական | Տվյալներ հայտնի չեն | Հայտնի չէ | Սպանություն/ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը | Սպանություն | Նախաքննություն |
| 59. | Գրիգոր Գրիգորյան | 16 նոյեմբեր, 2022 | ՀՀ | Պաշտոնական | Տվյալներ հայտնի չեն | ՀՀ քրեական օրենսգրքի 538-րդ հոդվածի 3-րդ մաս | Տվյալներ հայտնի չեն | Ավտովթար | Նախաքննություն |
| 60. | Աղավնի Խաչատրյան | 18 նոյեմբեր, 2022 | ՀՀ | Տեղեկատվություն չի տարածվել | Տվյալներ հայտնի չեն | Հայտնի չէ | Տվյալներ հայտնի չեն | Առողջական | Հայտնի չէ |
| 61. | Հովսեփ Մուրադխանյան | 26 նոյեմբեր, 2022 | ՀՀ | Տեղեկատվություն չի տարածվել | ՀՀ ՔԿ Մարտունու քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մաս | Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է 2 կամ ավելի մարդու մահ | Ավտովթար/ քաղաքացիական մեքենա | Նախաքննություն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 62. | Սերգեյ Ժամհարյան | 26 նոյեմբեր 2022 | ՀՀ | Տեղեկատվություն չի տարածվել | ՀՀ ՔԿ Մարտունու քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մաս | Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է 2 կամ ավելի մարդու մահ | Ավտովթար/ քաղաքացիական մեքենա՝ ուղևոր | Նախաքննություն |
| 63. | Սարգիս Ժամհարյան | 26 նոյեմբեր, 2022 | ՀՀ | Տեղեկատվություն չի տարածվել | ՀՀ ՔԿ Մարտունու քննչական բաժին | ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մաս | Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է 2 կամ ավելի մարդու մահ | Ավտովթար/ քաղաքացիական մեքենա՝ ուղևոր | Նախաքննություն |
| 64. | Ապրես Ապրեսյան | 16 դեկտեմբեր, 2022 | ԱՀ/ԼՂՀ | Տեղեկատվություն չի տարածվել | Տվյալներ հայտնի չեն | Հայտնի չէ | Տվյալներ հայտնի չեն | Ավտովթար | Հայտնի չէ |